

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՆ ՎԱԼԼԻ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏԻ ԱՎԱԶԱԿՈՂՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ
ՀԱՆՔԱԵՐԵՎԱԿՈՒՄՈՒՄ 2024-2026թթ. ԸՆԹԱՅՔՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՆ ՎԱԼԼԻ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝

ԴԱՎԻԹ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6
2. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ	8
3. ՀԱՆՔԵՐՆԱԿՄԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	11
4. ՇՐՋԱՆԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿԸ	14
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ	16
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	24
7. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	40
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍՄԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱԴԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	43
9. ԲՆԱԴԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	48
10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	54
11. ԲՆԱԴԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ	55
12. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	58

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն ՇՄԱԳ հաշվետվությունով նախատեսվող գործունեությունն է հանդիսանում ՀՀ Արմավիրի մարզի Արտամետի ավագակոպճային խառնուրդի երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարումը, որը նախատեսված է իրականացնել 2024-2026թթ. ընկած ժամանակահատվածում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվությունում օգտագործվել են հետևյալ հիմնական հասկացությունները, սահմանումները և եզրույթները /տերմիններ/, որոնք բերվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից (խմբ. 03.05.23թ, ՀՕ-150-Ն) և այլ նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին բաղադրիչների (մթնոլորտային օդ, կլիմա, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ բնապահպանական հողեր, բնակավայրերի կանաչ գոտիներ, կառույցներ, բնական օբյեկտներ, պատմության և մշակույթի հուշարձաններ), սոցիալական միջավայրի, ներառյալ մարդու առողջության, անվտանգության գործոնների, նյութերի, երևույթների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի կամ դրա բաղադրիչներից որևէ մեկի փոփոխությունը.

նախատեսվող գործունեություն՝ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում՝ նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, աստմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում՝ շահագործումից հանում կամ քանդում կամ նախագծային փոփոխություն.

նախաձեռնող՝ հիմնադրույթային փաստաթղթի նախագիծ ներկայացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ նախատեսվող գործունեություն իրականացնելու համար դիմող անձ.

ազդակիր բնակավայր՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հնարավոր ազդեցության ենթակա բնակավայր

շահագրգիռ հանրություն՝ հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով անմիջական կամ հավանական ազդեցություն կրող կամ դրանց վերաբերյալ ընդունվող որոշումների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

գործընթացի մասնակիցներ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական և իրավաբանական անձինք, ներառյալ ազդակիր համայնք, ազդակիր բնակավայր, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների կամ փորձաքննության գործընթացին.

բնապահպանական կառավարման պլան՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները, դրանց իրականացման ժամանակացույցը, մշտադիտարկման ցուցիչները, ծախսերի գումարային գնահատումը բնութագրող փաստաթուղթ.

շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիտորինգի) ծրագիր՝ շրջակա միջավայրի վրա ներգործության դիտարկմանը, հետնախագծային վերլուծությանը, պետական փորձաքննական եզրակացության և Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարմանը կամ արտադրական հսկմանը (ինքնահսկմանը) ուղղված գործողությունների ամբողջություն.

շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում՝ նախաձեռնողի կողմից նախատեսվող գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ուսումնասիրության գործընթաց.

փորձաքննություն՝ հիմնադրությային փաստաթղթի նախագծի և ՌԷԳ հաշվետվության կամ նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթի և ՇՄԱԳ հաշվետվության ուսումնասիրության, գնահատման և վերլուծության արդյունքով հիմնադրությային փաստաթղթի նախագծին և ՌԷԳ հաշվետվությանը համապատասխան կամ նախագծային փաստաթղթին և ՇՄԱԳ հաշվետվությանը համապատասխան նախատեսվող գործունեության վերաբերյալ դրական կամ բացասական պետական փորձաքննական եզրակացություն տալու գործընթաց.

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները,

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատում՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Գործունեություն իրականացնող, նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «ՍԱՆ ՎԱԼԼԻ» ՍՊԸ-ն:

Պետական գրացման համար՝ 83.110.1344721, գրանցման ամսաթիվ՝ 03.10.2023, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Նորաշեն թաղ. Շ. 34, բն 78:

Սույն ՇՄԱԳ-ը «ՍԱՆ ՎԱԼԼԻ» ՍՊԸ պատվերով կազմել է «ԷԼ ԷՆ ԴԻ» ՍՊ ընկերության կողմից:

«ՍԱՆ ՎԱԼԼԻ» ՍՊ ընկերությունը շինարարական աշխատանքների համար ավագի ու խճի արտադրության սեփական հումքային բազա ունենալու նպատակով, հաշվի առնելով Արտամետ գյուղի տարածքում ավագակոպձային հումքի բավարարող, հաշվառող, օգտակար հանածոյի կանխատեսվող պաշարները և մոտեցման ճանապարհների հարմարավետությունը, նախաձեռնել է մոտ 37.8 հա տարածքում ԱԿԽ-ի պաշարների գնահատման նպատակով տեղամասում իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ հետազայում արդյունահանելու համար, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կուտակները տարիներ շարունակ հանդիսացել են տեղական բնակչության համար ավագակոպձային նյութերի արդյունահանման օբյեկտներ: Վերջին տարիներին հանրապետությունում նկատվող որոշակի տնտեսական զարգացմանը զուգընթաց ավելանում են նաև շինարարական աշխատանքների ծավալները, մեծանում է պահանջարկը նաև ծանր բեռների լցանյութերի նկատմամբ, որի պահանջարկը հանրապետությունում հիմնականում բավարարում է ավագակոպձային նստվածքների վերամշակման միջոցով:

«ՍԱՆ ՎԱԼԼԻ» ՍՊ ընկերությունը սեփական ֆինանսական միջոցների հաշվին նախաձեռնելով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարումը ՀՀ Արմավիրի մարզի, Արտամետի ավագակոպձային խառնուրդի հանքաերակման 37.8 հա տարածքում, նպատակ ունի որոշելու օգտակար հանածոյի հզորությունը, որակական հատկությունները և պարզաբանելու ավագակոպձային խառնուրդից տարանջատված կոպձի (և դրանից ստացված խճի), ինչպես նաև ավագի որակական հատկությունների համապատասխանությունը որպես ճանապարհաշինարարական պաստառահումքի արտադրության հումք «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍ ԴՕՇ-ի և 8736-2014 «Ավագ շինարարական աշխատանքների համար» ԴՕՇ-ի տեխնիկական պահանջներին:

Երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն երկրաբանահանությամբ երթուղիների, հետախուզահորերի անցման, և համապատասխան նմուշարկման աշխատանքներով:

Օգտակար հանածոյի որակական հատկությունների (ֆիզիկամեխանիկական ցուցանիշների) ուսումնասիրությունները կիրականացվեն մասնագիտացված լաբորատորիայում: Կկատարվեն նաև օգտակար հանածոյի քիմիական և միներալոգիական ուսումնասիրություններ ՀՀ ԳԱԱ Երկրաբանական ինստիտուտում:

Ուսումնասիրության աշխատանքների արդյունքներով նախատեսվում է կազմել երկրաբանական հաշվետվություն, ինչը ՏՏՀ-ի հետ միասին կներկայացվի ՀՀ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության քննարկմանն ու հաստատմանը:

Աշխատանքների կատարման ժամկետներն են.

- Աշխատանքների սկիզբ՝ 2024թ 4-րդ եռամսյակ
 - Աշխատանքների ավարտը – 2026թ 4-րդ եռամսյակ
- Ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Բաղրամյան խոշորացված համայնքի Արտամետ բնակավայրի վարչական սահմաններում, զբաղեցնում է 37.8 հա մակերեսով տարածք: Տարածքը համայնքային կադաստրային քարտեզներում հաշվառված է որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր: Երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու համար հայցվող տեղամասը եզրագծվում է հետևյալ կոորդինատներով (կոորդինատները ներկայացված են ARMWGS-84 համակարգով).

1. $X = 4443448.81$ $Y = 8407150.64$
2. $X = 4443400.81$ $Y = 8407576.69$
3. $X = 4443313.29$ $Y = 8407588.2$
4. $X = 4443073.26$ $Y = 8407615.77$
5. $X = 4442988.06$ $Y = 8407622.42$
6. $X = 4442945.36$ $Y = 8407618.4$
7. $X = 4442930.34$ $Y = 8407614.0$
8. $X = 4442914.34$ $Y = 8407603.53$
9. $X = 4442897.42$ $Y = 8407589.62$
10. $X = 4442884.52$ $Y = 8407585.04$
11. $X = 4442632.78$ $Y = 8407562.71$
12. $X = 4442534.03$ $Y = 8407560.59$
13. $X = 4442545.97$ $Y = 8407169.4$
14. $X = 4442674.21$ $Y = 8407171.03$



«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով Բաղրամյան համայնքում, համայնքապետարանի շենքում անցկացվել է հանրային քննարկում, որի ընթացքում հանրությանը ներկայացվել է նախատեսվող գործունեության մասին և Բաղրամյան համայնքի ղեկավարի կողմից տրվել է նախնական համաձայնություն:

Արմավիրի մարզի Արտամետի ավազակոպճային խառնուրդի երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքների Ծրագրի համար կազմվել է ՇՄԱԳ-ը, որը հանրային քննարկումների արձանագրության տեսաձայնագրության և նախնական համաձայնության հետ պետք է ներկայացվի Շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն ստանալու նպատակով:

1.2. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի ն կարագիրը

Արմավիրի մարզի Արտամետի ավազակոպճային խառնուրդի երևակումումը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում Տալվորիկ գյուղից մոտ 3.0 կմ հյուսիս արևելք, Արտամետ գյուղից մոտ 4.3 կմ արևելք, Հուշակերտ գյուղից 3.2 կմ հյուսիս արևմուտք, Արևադաշտ գյուղից մոտ 2.6 կմ և Գրե-Ակկո լեռից 1.5 կմ հարավ արևմուտք (Նկար 1, 2): Հանքերևակումը գտնվում է 925-930 մ բացարձակ բարձրությունների վրա և զբաղեցնում է 37.8 հա մակերես:

Հանքերևակման կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝

- հյուսիսային լայնության - $40^{\circ} 6' 53.97''$
- արևելյան երկայնության - $43^{\circ} 54' 48.53''$

Մոտակա բնակավայրերն են Հուշակերտ, Արտամետ, Տավորիկ գյուղերը և Արմավիր քաղաքը:

Հանքերնակման օգտակար հաստվածքը ծագումնաբանորեն կապված է Արարատյան հարթավայրի Արաքս գետի Առաջին (ստորին) վերհունային դարավանդի նստվածքային առաջացումների հետ: Այն ունի պարզ երկրաբանական կառուցվածք:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են բացառապես Արաքս գետի ստորին վերհունային դարավանդի վերին չորրորդականինստվածքային առաջացումները: Ժամանակակից դելուվյալ առաջացումները հետախուզման սահմաններում գործնականում բացակայում են՝ ներկայացված են առանձին՝ մինչև 5-10 սմ հզորությամբ հողաբուսական կավային նստվածքների կոզյակների ձևով:

Դարավանդային առաջացումները ներկայացնում են Արարատյան դաշտավայրում լայն տարածված վերին չորրորդականի գետա-լճային առաջացումներ: Հանքերնակման սահմաններում դրանց կտրվածքում վերնից-ներքև առանձնանում են կավավազների, ավազակոպճային նստվածքների և դրանց հիմնատակող կավերի շերտերը:


Ավազակավերը հանքերնակումում ունեն համատարած տարածում, նշվում են նաև դրա հարակից տարածքներում: Ներկայացված են հիմնականում ավազակավերով՝ մանրաբեկորային նյութի չնչին խառնուրդով: Ավազակավերը համատարած ծածկում են օգտակար հաստվածքի ավազակոպիճների: Նշված ավազակավերը դիտարկվում են որպես մակաբացման ապարներ: Դրանց հզորությունը տեղամասի սահմաններում տատանվում է 0.9-1.5մ սահմաններում, կազմելով միջինը 1.2մ:

Օգտակար հանածոյի մարմինը հետախուզված տարածքում ներկայացված է ավազակոպճային խառնուրդի հորիզոնականին մոտ տեղադրմամբ շերտաձև մարմնի ձևով, որի հզորությունը տատանվում է 9.0-12.8մ սահմաններում:



Նկար 1

Նկար 1 Տարածքի իրավիճակային սխեմա
Հատված Google Earth քարտեզից:



Նկար 1

1.3 Նախագծի այլընտրանքները, այդ թվում՝ զրոյական տարբերակը

Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ չեն իրականացվում:

Այս դեպքում՝

- Ազդակիր բնակավայրում բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված ժամանակավոր ազդեցություններ, ռիսկեր չեն առաջանա,
- կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնածին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից, զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- Ծրագրի իրականացման ընթացքում, ինչպես նաև հետագայում հանքավայրի արդյունահանման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման և սոցիալական պայմանների բարելավման հետ կապված հնարավորությունները,
- Երկրաբանական ֆոնդում ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկու բազալտների բազալտների հանքավայրում հաստատված պաշարների վերաբերյալ տեղեկատվությունը չի լինի:

Դիտարկելով երկու տարբերակները ընտրվել է երկրորդ՝ երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման տարբերակը:

2. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Արմավիրի մարզի Արտամետի ավազակոպճային խառնուրդի երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի

պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

– 2014 թվականի հունիսի 21-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-110-Ն օրենքը խմբագրված տարբերակով (03.05.23 ՀՕ-150-Ն), որը կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որը կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

– մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման,

պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

– «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

– ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

– ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով սահմանվել է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը,

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

– ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N 1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով

սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

– ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի N 342-Ն հրաման, որով հաստատվել է այաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը:

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:

– ՀՀ կառավարության 11 նոյեմբերի 2021 թվականի N 1848-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը հաստատելու մասին պահանջները,

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N675-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները,

- ՀՀ Կառավարության N 1396-Ն որոշում /Ընդունված 08.09.20112./ Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

– ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ.-ի N369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:

– ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:

2.1 Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա

ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության: Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի ընդերքօգտագործման բնագավառում 2)-րդ կետի ա. ենթակետի երկրաբանական ուսումնասիրություններ սույն նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով: Սույն ՇՄԱԳ-ը մշակվել է փորձաքննական եզրակացություն ստանալու համար:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ-ն իրականացվել է «ՄԱՆ ՎԱԼԼԻ» ՍՊԸ-ի կողմից, որը հանդիսանում է որպես Օրենքով սահմանված նախաձեռնող: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: ՇՄԱԳ-ը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության Ծրագիրը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

Գնահատումն իրականացնելիս հաշվի են առնվում գործընթացի մասնակիցների, այդ թվում՝ ազդակիր համայնքի ղեկավարների, շահագրգիռ հանրության ներկայացրած առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները:

Որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներն են՝

- 1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
- 2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.
- 3) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի տրամադրած տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական գեոդեզիական կոորդինատային համակարգով
- 4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).
- 5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում.

- 6) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.
- 7) նախագծային փաստաթղթով նախատեսված բնապահպանական կառավարման պլանը.
- 8) հաստատված հիմնադրությային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.
- 9) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը:

ՇՄԱԳ աշխատանքներում հաշվի են առնվել տեղանքի ինչպես բնապահպանական այնպես էլ սոցիալական ելակետային տվյալները, գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, օգտագործվող հումքի և նյութերի վերաբերյալ տվյալները:

Նախաձեռնողի կողմից կազմված ՇՄԱԳ հաշվետվությունը պետք է ներկայացվի շրջակա միջավայրի նախարարություն՝ փորձաքննության:

3. ՇՐՋԱՆԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱԴՐ

Ուսումնասիրվող շրջանի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրությամբ տարբեր տարիներին զբաղվել են Կ. Ն. Պաֆենհոլցը, Ս. Ս. Մկրտչյանը, Ա. Տ. Ասլանյանը, Հ. Հ. Գաբրիելյանը, Ա. Տ. Վեհունին, Զ. Հովհաննիսյանը, Վ. Վանիյանցը, Վ. Մ. Ամարյանը և ուրիշներ:

Շրջանը երկրաբանական կառուցվածքի հիմնական տարրերն արտացոլված են Վ. Ամարյանի ղեկավարությամբ կազմված պետական 1:50000 մասշտաբի երկրաբանական քարտեզում, որի նյութերով կազմվել է 1:25000 մասշտաբի երկրաբանական քարտեզ:

Արարատյան դաշտավայրի մերձարաքսյան իջվածքի ակումուլյատիվ լճադարավանդային հարթավայրը ձևավորվել է վերին պլիոցեն-չորրորդականի ընթացքում Արաքս գետի մեանդրման արդյունքում և հանքավայրի հարակից տարածքում ներկայացված է գետերի մշտական հոսքի մակարդակից 2.5-5.0 մ բարձրությամբ Արաքսի ստորին լժային դարավանդի վերին չորրորդականի հասակի ալուվյալ, պրոլուվյալ նստվածքներով և մեղմաթեք հարթավայրի հունամերձ հատվածի ժամանակակից ալուվյալ-պրոլուվյալ նստվածքներով:

Պլիոցեն – չորրորդականի հասակի տերրիգեն և հրաբխածին առաջացումների մերձհորիզոնական հաստվածքը՝ աննշան անկյունային աններդաշնակությամբ ծածկում է թույլ ծալքավոր հիմքի՝ միոցենի նստվածքներին: Միոցենի համակարգի ապարները ըստ երկրաբանական քարտեզի ուսումնասիրվել են Փշատավան և Զանֆիդա գյուղերի հարևանությամբ հորատված թիվ 63 և 60 խորքային հորատանցքերով և ներկայացված են (ներքևից վերև) Հացավանի, Հոկտեմբերյանի, Զրվեժի և Հրագդանի շերտախմբերով:

Հացավանի շերտախմբին (ստորին միոցենի) վերագրվող խայտաբղետ կավերի (առավելապես՝ կարմրագույն և հաճախ՝ գիպսաբեր) միկրոկոնգլոմերատների, նումուլիտային ավազաքարերի, կոնգլոմերատների, այրվող թերթաքարերի հերթափոխվող շենտենով: Այս ապարների հզորությունը հասնում է 250 մ-ի:

Հոկտեմբերյանի շերտախումբը (միջին միոցեն) ներկայացված է վերին երկու հորիզոններով, բաղկացած միկրոկոնգլոմերատների, ավազաքարերի, կոնգլոմերատների, կավերի, կավավազների ու ավազակավերի հերթափոխվող շերտերով, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 500-520 մ:

Ջրվեժի շերտախումբը (միջին միոցեն) ներկայացված է գիպսա-աղաբեր կավերով՝ քարաղի, գիպսի և անհիդրիդի դարսաշերտերով, որի հզորությունը տատանվում է 165-320 մ:

Հրազդանի շերտախումբը (վերին միոցեն) ներկայացված է կավերի, ավազաքարերի և կոնգլոմերատների հերթափոխվող շերտերով: Այս ապարների հզորությունը 115-128 մ է:

Ստորին-միջին պլիոցենը ներկայացված է կավերով, ավազներով, կոպճազլաքարերով, հիմքում դոլերիտային բազալտների հոսքերով: Հաստվածքի հզորությունը 120-150 մ է:

Վերին պլիոցեն-չորրորդական ժամանակաշրջանում ակտիվ հրաբխականության և Արարատյան գոգավորության ընդհանուր իջեցման պայմաններում այստեղ ձևավորված լճային ավազանում կուտակվել են կոպիճի, ավազի և կավի հզոր՝ մինչև 200 մ հզորությամբ լճագետային նստվածքներ: Այս համակարգի կտրվածքում առանձնացվում են.

Արագածի շերտախմբի (վերին պլիոցեն) ստորին ենթաշերտախմբի վերին դարսաշերտի հրաբխածին ապարների հաստվածքը, մինչև 150մ ընդհանուր հզորությամբ, որը ներկայացված է անդեզիտաբազալտներով, խարամներով և լավաբրեկչիաներով:

Արարատյան հարթաբայրի միջին-վերին չորրորդականի երրորդ և երկրորդ դարավանդների լծա-ալուվյալ, ալուվյալ-պրոլուվյալ նստվածքների հորիզոնները և Արաքսի ու Սևջուր գետերի հնահունային առաջացումները, որոնց հզորությունը հասնում է մինչև 100-120մ, ինչը վկայում է Արաքսի ինտենսիվ ակումուլյատիվ-երոզիոն գործունեության մասին: Այս նստվածքները հիմնականում ներկայացված են ավազակոպիճներով, ավազներով, ավազային և դիատոմիտային կավերով:

Արարատյան դաշտավայրի վերին չորրորդականին վերագրվող լճային նստվածքների Արաքս գետի առաջին վերհունային դարավանդի հորիզոնը, որի հզորությունը հասնում է մինչև 20-25մ: Լճադարավանդային նստվածքները հիմնականում ներկայացված են կոպճազլաքարերով, ավազակոպիճներով, ավազներով, ավազակավերով և կավերով:

Նշված դարավանդի ավազակոպճային նստվածքներին է հարում հայցվող տեղամասը:

Հարակից տարածքներում տարածում ունեն նաև վերին չորրորդական-ժամանակակից էլուվյալ-դելուվյալ՝ կոպճային, Արաքս գետի հնահունի ու ճահճային ավազակավային առաջացումները, որոնց հզորությունը հասնում է մինչև 5-10մ, ինչպես նաև ժամանակակից ալուվյալ նստվածքները, որոնք ներկայացնում են 1-10մ հզորության ժամանակակից գետերի հունային ավազակոպճային և կավավազային առաջացումներ:

3.1. Արտամետի ավազակոպչային խառնուրդի հանքերնական երկրաբանական կառուցվածքի համառոտ բնութագիրը

Հանքերնական օգտակար հաստվածքը ծագումնաբանորեն կապված է Արարատյան հարթավայրի Արաքս գետի Առաջին (ստորին) վերհունային դարավանդի նստվածքային առաջացումների հետ: Այն ունի պարզ երկրաբանական կառուցվածք: Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են բացառապես Արաքս գետի ստորին վերհունային դարավանդի վերին չորրորդականինստվածքային առաջացումները: Ժամանակակից դելուվյալ առաջացումները հետախուզման սահմաններում գործնականում բացակայում են՝ ներկայացված են առանձին՝ մինչև 5-10 սմ հզորությամբ հողաբուսական կավային նստվածքների կոզյակների ձևով:

Դարավանդային առաջացումները ներկայացնում են Արարատյան դաշտավայրում լայն տարածված վերին չորրորդականի գետա-լճային առաջացումներ: Հանքերնական սահմաններում դրանց կտրվածքում վերնից-ներքև առանձնանում են կավավազների, ավազակոպչային նստվածքների և դրանց հիմնատակող կավերի շերտերը:

Ավազակավերը հանքերնակումում ունեն համատարած տարածում, նշվում են նաև դրա հարակից տարածքներում: Ներկայացված են հիմնականում ավազակավերով՝ մանրաբեկորային նյութի չնչին խառնուրդով: Ավազակավերը համատարած ծածկում են օգտակար հաստվածքի ավազակոպիչներին: Նշված ավազակավերը դիտարկվում են որպես մակաբացման ապարներ: Դրանց հզորությունը տեղամասի սահմաններում տատանվում է 0.9-1.5մ սահմաններում, կազմելով միջինը 1.2մ:

Օգտակար հանածոյի մարմինը հետախուզված տարածքում ներկայացված է ավազակոպչային խառնուրդի հորիզոնականին մոտ տեղադրմամբ շերտաձև մարմնի ձևով, որի հզորությունը տատանվում է 9.0-12.8մ սահմաններում:

Ըստ «Инструкция по составлению проектов и смет на геологоразведочные работы» և «Инструкция по применению классификации запасов к месторождениям песка и гравия» հրահանգի հանձնարարականների, հետախուզվող Արտամետի ավազակոպչային խառնուրդի հանքերնակումն ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության և երկրաբանական հատկանիշների փոփոխականության աստիճանի վերագրվում է 1-ին խմբին:

4.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

4.1 Երկրաբանահետախուզական աշխատանքների մեթոդիկան և ծավալները

«ՄԱՆ ՎԱԼԼԻ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է ՀՀ Արմավիրի մարզի, Արտամետի ավազակոպչային խառնուրդի հանքերնական 37.8 հա տարածքում կատարել երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ նպատակ ունենալով որոշել օգտակար հանածոյի հզորությունը, որակական հատկությունները և պարզաբանելու ավազակոպչային խառնուրդից տարանջատված կոպճի (և դրանից ստացված խճի), ինչպես նաև ավազի որակական հատկությունների համապատասխանությունը

որպես ճանապարհաշինարարական պաստառահումքի արտադրության հումք «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍ ՄՕՏ-ի և 8736-2014 «Ավազ շինարարական աշխատանքների համար» ՄՕՏ-ի տեխնիկական պահանջներին:

Արմավիրի մարզի Արտամետի ավազակոպճային խառնուրդի երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն երկրաբանահանույթային երթուղիների, հետախուզահորերի անցման և նմուշարկման աշխատանքներով:

Երկրաբանական աշխատանքներն կատարման հիմնական մեթոդներն են.

- Իրականացվելու երկրաբանական աշխատանքները մինչև 8մ-ոց հետախուզահորերով և նմուշարկման միջոցով:

- Տեղամասում կատարել 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիկ, որի հիման վրա կկազմվի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզ՝ պաշարների հաշվարկման եզրագծով:

- Կատարել ավազակոպճային խառնուրդի ֆիզիկամեխանիկական հատկանիշների, քիմիական լաբորատոր փորձարկումների և պետրոգրաֆիկական ուսումնասիրություններ:

- Իրականացնել հիդրո-ինժեներաերկրաբանական և ռադիոմետրիական ուսումնասիրություններ:

- Կատարել ավազակոպճային խառնուրդի հաշվեկշռային պաշարների հաշվառում և կազմել երկրաբանական հաշվետվություն:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է ելնելով երևակման պարզ երկրաբանական կառուցվածքից (1-ին խումբ), չափսերը, տեղանքի հարթ ռելիեֆից, օգտակար հանածոյի շերտաձև մարմնի ոչ մեծ հզորությունից, ինչպես նաև հաշվի են առնվել «Ավազի և կոպիճի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» հանձնարարականները:

Վերոհիշյալի հաշվառմամբ հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մոտ 8 մ խորությամբ 16 հետախուզահորերի միջոցով: Հետախուզվող տարածքի բարդ եզրագծերի պարագայում, հետախուզական փորվածքները նախատեսվում է հնարավորինս տեղադրել հատկացված տարածքի եզրակետերում: Հետախուզական ցանցի համաչափ խտությունն ապահովվելու նպատակով ևս 3 հետախուզահոր կանցկացվի տեղամասի միջնամասում: Տեղամասում ձևավորված հետախուզական ցանցի խտությունը՝ հետախուզագծերի միջև 200-250 մ, թույլ կտա տալ օգտակար հանածոյի որակական և քանակական գնահատականը, իսկ հետախուզած պաշարները գնահատել ըստ արդյունաբերական C_1 կարգի:

Օգտակար հանածոյի գրանուլոմետրական կազմի և ֆիզիկամեխանիկական հատկությունների, քիմիական և միներալոգիական ուսումնասիրությունների նպատակով նախատեսվում է հետախուզահորերից վերցնել 1-ական ակոսային նմուշ:

Նմուշների ընդհանուր քանակը կկազմի 16 և վերցված նմուշներից յուրաքանչյուրի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 15 կգ-ի: Նմուշները պետք է ունենան մինչև 5.0մ երկարություն, 0.1մ լայնություն և 0.05 խորություն: Նմուշները պետք է վերցվեն օգտակար հանածոյի շերտին ուղղահայաց:

Նախագծով նախատեսվում է որոշել ԱԿԽ-ի ծավալային և ծավալալիքային զանգվածները, ինչպես նաև փխրեցման գործակիցը:

Նախագծված աշխատանքների իրացումը հնարավոր կդարձնի տալ օգտակար հանածոյի որակական գնահատականը, ինչպես նաև համաձայն վերը նշված հրահանգի:

Վերցված նմուշները «Անալիտիկ» ՓԲ ընկերության լաբորատորիայում կենթարկվեն քիմիական և ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների:

Բացի վերը նշված աշխատանքներից, տեղամասի ինժեներակրթական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ, իսկ ճառագայթահիգիենիկ իրավիճակը պարզաբանելու համար՝ ռադիոակտիվ դիտարկումներ:

4.2 Երկրաբանահանույթային աշխատանքներ

Երևակման տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզների կազման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ 37.8 հա տարածքի վրա, հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Տոպո-մարկշեյդերական աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով, համապատասխան մասնագետների կողմից:

4.3. Հետախուզահորերի անցում

Նախատեսվում է անցնել 1.5x1.5 մակերեսով 16 հետախուզահոր, յուրաքանչյուրը 8մ խորությամբ: Հետախուզահորերը նախատեսվում է անցնել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով:

Հետախուզահորերի ծավալը կկազմի $16 \times 8 = 128 \text{ ԳԾ.մ կամ } 2.25 \times 8 \times 16 = 288 \text{ մ}^3$:

4.4. Ծավալային զանգվածի որոշում դաշտային պայմաններում

Դաշտային պայմաններում ավազների բնական խտության (բնամասում), ծավալային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար հետախուզահորերի անցմանը զուգընթաց նախատեսվում է դաշտային պայմաններում որոշել կուտակի ծավալային և ծավալալիքային զանգվածների, ինչպես նաև փխրեցման գործակիցը:

Աշխատանքները կիրականացվեն հայտնի ծավալից հանված նյութի կշռման եղանակով:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է տեղամասում անցած հետախուզահորերի 288 մ³ ծավալից 60մ³-ը օգտագործել կուտակի բնական խտության (բնամասում), ծավալալիքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար:

4.5. Լեռնային փորվածքների փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը, ընդհանուր՝ 128 մ երկարությամբ: Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1: 100 մասշտաբով:

Փաստագրման աշխատանքները կիրականացվեն առաջին կարգի երկրաբանի կողմից: Մասնակի մասնակցություն կունենա նաև գլխավոր մասնագետը:

4.6. Լեռնային փորվածքների լցում

Տեղամասում անցած հետախուզահորերի փաստագրումից ու նմուշարկումից հետո նախատեսվում է հետախուզահորերի լցման աշխատանքներ: Դրանք կկատարվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով:

Լցման աշխատանքների ընդհանուր ծավալը կկազմի 288 մ³ (8x16 x 1.5 x 1.5):

4.7. Նմուշարկում

Օգտակար հանածոյի նմուշարկումը նախատեսվում է դրա հատիկալին կազմը և որակական հատկանիշները պարզաբանելու համար:

Ֆիզիկամեխանիկական ուսումնասիրությունների նպատակով հետախուզահորերից նախատեսվում է վերցնել 16 նմուշ ակոսային եղանակով (մեկական յուրաքանչյուր փորվածքից): Նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզահորի պատից, օգտակար հաստվածքի ամբողջ հզորությամբ (ավազակուտակի հզորությունը ակնկալվում է մինչև 4-5 մ)՝ ակոսի 40x40 սմ կտրվածքով:

Նախքան լաբորատորիա ուղարկելը նմուշները տեղում կենթարկվեն մշակման: Նմուշների մշակումը կկատարվի հետևյալ կերպ՝ նմուշարկված ամբողջ ԱԿԽ-ն կլցվի բրեզենտե փովածքի վրա, կխառնվի և միանգամյա կրճատման միջոցով կհասցվի 15կգ, որը և կկազմի նմուշի նյութը:

Վերջինս կլցվի առանձին պարկերի մեջ, կպիտակավորվի և նոր միայն կուղարկվի լաբորատորիա՝ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար:

Դրանցից 3 նմուշ կենթարկվի նաև քիմիական անալիզի և 3 նմուշ միներալային կազմի ուսումնասիրությունների: Քիմիական և միներալոպետրոգրաֆիական ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում՝ պայմանագրային հիմունքներով:

Լաբորատոր հետազոտությունները կիրականացվեն «Անալիտիկ» ՓԲ ընկերության լաբորատորիայում, պայմանագրային հիմունքներով:

4.8. Հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ

Հանքավայրի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ:

Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել՝

- Տեղամասի ապարների կազմը, դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, անիզոտրոպիան,
- Պարզաբանել տեղանքի գեոդինամիկ պրոցեսները
Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել.
- Հետազոտել հիմնական ջրատար հորիզոնները, եթե այդպիսիք կան, ապա ուսումնասիրել և նկարագրել դրանք:
Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ ուսումնասիրությունները կկատարվեն մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցելով:

4.9. Օգտակար հանածոյի ռադիոմետրական ուսումնասիրություններ

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար տեղամասի տարածքում նախատեսվում է կատարել սփրինինգային ճառագայթային մոնիթորինգային աշխատանքներ, որոնց հիման վրա կտրվի դրա ճառագայթահիգիենիկ գնահատականը:

Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով մասնագիտացված կազմակերպության կողմից:

4.10 Հաշվետվության կազմման աշխատանոցային աշխատանքներ

ՀՀ Արմավիրի մարզի, Արտամետի ավազակոպճային խառնուրդի հանքաերևակման 37.8 հա տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների և օգտակար հանածոյի լաբորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո, դրական արդյունքների դեպքում, կկատարվեն աշխատանոցային աշխատանքներ համապատասխան գծագրական հավելվածներով երկրաբանական հաշվետվության (պաշարների հաշվարկով) և հանքավայրի շահագործման նպատակահարմարության ՏՏՀ-ի կազմման համար, որոնց ընթացքում.

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի տեղամասի երկրաբանատնտեսագիտական գնահատականը,
- կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկը,
- կկազմվի հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ երկրաբանական հաշվետվություն,
Պաշարների հաշվարկման նյութերը կներկայացվեն պետական ընդերքաբանական փորձաքննության:

Վերը նշված աշխատանքների կատարման համար անհրաժեշտ կլինի Խմբի ղեկավար՝ 1 մարդ - 2 ամիս աշխատանքային ժամանակահատվածով, առաջատար երկրաբ - 1 մարդ - 1.5 ամիս աշխատանքային ժամանակահատվածով, I-ին կարգի երկրաբ. - 1 մարդ - 1 ամիս և Գծագրող - 1 մարդ - 0,5 ամիս ժամանակահատվածով;

4.11 Ճանապարհների և հորատման հրապարակների շինարարություն

Քանի որ ուսումնասիրվող տեղամասը հարթ է, նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Հետախուզական աշխատանքները իրականացվելու են հետախուզահորերով, որոնք անցկացվելու են մեխանիկական եղանակով (էքսկավատորով): Տեղամասին մոտեցող գրունտային ավտոճանապարհը բարեկարգ է, նորոգման կարիք չունի:

Բեռների, նմուշների և անձնակազմի փոխադրումը նախատեսվում է իրականացնել մարդատար ավտոմեքենաներով՝ I և III կարգի ավտոճանապարհներով:

Տրանսպորտային ծախսերի արժեքը հաշվարկվում է դաշտային աշխատանքների և ժամանակավոր կառույցների արժեքների 4 %-ի չափով:

Տեղամասում անցած հետախուզահորերի փաստագրումից ու նմուշարկումից հետո նախատեսվում է հետախուզահորերի լցման աշխատանքներ, որի արդյունքում կվերականգնվի և կբարեկարգվի խախտված ռելիեֆը:

4.12 Ռեկուլտիվացիա

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ խախտված հողերի վերականգնման աշխատանքները ներառում են միայն հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած լեռնային զանգվածի հետ լցման աշխատանքները /որի ընդհանուր ծավալը կազմում է 288մ³/ որն իրականացվելու է հոտախուզահորերը քանդելու նպատակով վարձակալած էքսկավատորի միջոցով: Հետախուզահորերի անցման ժամանակ հողի վերին շերտի պահպանման և ռեկուլտիվացիոն աշխատանքները և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներկայացված են ընկերության կողմից կազմված երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված ռեկուլտիվացիայի գումարի մեջ, որը ներկայացված է ստորև:

Արմավիրի մարզի Արտամետի ավազակոպճային խառնուրդի երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողային ծածկույթի ընդհանուր մակերեսը, որը աշխատանքների ավարտից հետո ենթակա է վերականգնման, կազմում է հետախուզահորեր - 36.0 մ²:

Հետախուզահորերի անցման ժամանակ հողի վերին շերտի պահպանման նպատակով ծրագրով նախատեսվում է դրանց տարածքից նախապես հանել հողի շերտը և ժամանակավոր կուտակել փորվածքի հարևանությամբ, աշխատանքների ավարտից հետո օգտագործել տարածքների կենսաբանական վերականգնման նպատակով:

Հետախուզահորերի անցման ժամանակ հողի վերին շերտի պահպանման նպատակով ծրագրով նախատեսվում է դրանց տարածքից նախապես հանել հողի շերտը /միջին հզորությունը տարածքում կազմում է 0.2մ/ և ժամանակավոր կուտակել 1 մ հեռավորության վրա, աշխատանքների ավարտից հետո օգտագործել խախտված տարածքի վերականգնման համար:

ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշումը, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի

բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները, տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող շինարարական և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների կատարման ընթացքում հողի բերրի շերտի հանման և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի օգտագործման վրա: Տվյալ դեպքում հետախուզահորերի անցման ժամանակ հողի վերին շերտը օգտագործվում է խախտված տարածքների վերականգնման համար: ՀՀ Կառավարության /Ընդունված 08.09.2011թ./ Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին N 1396-Ն որոշման համաձայն, այն դեպքերում, երբ հողամասը ենթակա է վերականգնման (օգտակար հանածոների արդյունահանում, երկրաբանահետախուզական և այլ ժամանակավոր աշխատանքներ), ապա բերրի շերտը տեղափոխվում և պահպանվում է վերականգնվող հողամասի մոտ, որպես կանոն, գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողերի վրա և անմիջապես աշխատանքների ավարտից հետո օգտագործվում է խախտված տարածքների վերականգնման համար:

ացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է տարածքի մակերեսից և հողաբուսաշերտը վերականգնվում է 0.2մ խորության վրա: Հանվող հողի վերին շերտը նախատեսված է կուտակել անմիջապես փորվածքի կողքին: Պահպանության ենթակա և հետագայում ռեկուլտիվացիայի/տարածքների վերականգնման նպատակով օգտագործվող հողի շերտի ծավալը հետախուզահորերի ընդհանուր մակերեսում՝ $16 \times 2,25 = 36.0 \text{ մ}^2$ կազմում է $36.0 \times 0.2 = 7,2 \text{ մ}^3$:

Այս աշխատանքները կատարվելու են ձեռքով՝ III կարգի ապարներով: Ռեկուլտիվացիոն աշխատանքները կատարվելու են անմիջապես աշխատանքների ավարտից հետո՝ հետախուզական աշխատանքներին մասնակցող անձնակազմի և տեխնիկայի ուժերով:

Ռեկուլտիվացիայի գումարը 1 մ^2 մակերեսի համար կկազմի 2600դրամ, վերականգնման ենթակա ընդհանուր՝ 36.0 մ^2 մակերեսի համար գումարը կկազմի $36,0 \text{ մ}^2 \times 2600 \text{ դր} = 93\ 600 \text{ դրամ}$:

Ապարների հետլցման և հետախուզահորերի հարթեցման աշխատանքներից հետո նախատեսվում է նաև կենսաբանական վերականգնում՝ 36.0 մ^2 մակերեսի համար, որի ծախսը կկազմի՝ $0,0036 \times 400000 = 1440$ ՀՀ դրամ: Կենսաբանական ռեկուլտիվացիայի նպատակով տարածքում կկատարվի նաև տարածքին բնորոշ խոտային բուսականության սերմերի ցանք: Այդ աշխատանքները կատարվելու են ձեռքով:

1հա տարածքի կենսաբանական վերականգնման անհրաժեշտ գումարը կազմում է 400000 ՀՀ դրամ: Ընդամենը ռեկուլտիվացման գումարը /լեռնատեխնիկական և կենսաբանական/ կկազմի՝ 152840 ՀՀ դրամ / $151400 + 1440$ /:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար անհրաժեշտ միջոցառումները և ծախսերը ներկայացված է ստորև՝ աղյուսակում:

Աղյուսակ 1

h/h	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի գինը, հազ. դր	Գումարը, հազ.դր
1	2	3	4	5	6

1.	հետախուզահորերի լցման աշխատանքների ընդհանուր ծավալի համար վարորդի աշխատավարձ	մ ³	288		50.0
2.	Բուսահողի կտրում ձեռքով և կուտակում հետախուզահորերի հարևանությամբ	մ ³	7.2	2.5	18.0
3.	Բուսահողի տեղափոխում դեպի ռեկուլտիվացիոն տարածք՝ հետլիցքով և հարթեցումով,	մ ³	7.2	2.7	19.4
4.	Ռեկուլտիվացման աշխատանքներ կատարող բանվորի աշխատավարձ	հազ.դրամ			41.0
	Ընդամենը				128.4
5.	Անուղակի ծախսեր	5%			6.42
	Ընդամենը				134.82
6.	Այլ ծախսեր	10%			13.5
7.	Չնախատեսված ծախսեր				3.1
	Ամբողջը				151.4
8.	Վերականգնված տարածքների պարարտացում օրգանական պարարտացումով, սերմերի ցանկ	մ ²	36	0.04	1.44
	ընդամենը				152.84

Նշված գումարը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան, որով սահմանվել է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը:

Քանի որ աշխատանքներն իրականացվելու են ընդերքօգտագործողի սեփականություն հանդիսանող հողատարածքում հողին հասցվող վնասի փոխհատուցում չի նախատեսվում:

Հետախուզվող տեղամասում նախատեսվող աշխատանքների ծավալները

Աղյուսակ 2

Հ/Հ	Աշխատանքների բնույթը	Չափման միավորը	Ծավալը
1	Տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ՝ 1:1000 մասշտաբի	հա	37.8
2	Հետախուզահորերի անցում	գծ.մ	128
3	Դաշտային պայմաններում ծավալային և ծավալալիքային զանգվածների որոշում	մ ³	60
4	Հետախուզահորերի փաստագրում	գծ.մ	128

5	Փորվածքների հետլցնում	մ ³	288
6	Լաբորատոր հետազոտություններ		
	Ֆիզ. մեխ. Փորձարկումներ լրիվ ցիկլով	Նմուշ	16
	Քիմիական անալիզներ	Նմուշ	3
	Միներալապետրոգրաֆիական ուսումնասիրություններ	Նմուշ	3
7	Հողերի ռեկուլտիվացիա	մ ²	36.0
8	Ճառագայթահիգիենիկ իրավիճակի գնահատում	-	+
9	Հանքավայրի արդյունաբերական գնահատում	-	+
10	Հիդրոերկրաբանական ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ	-	+
11	Հաշվետվության և ՏՏՀ-ի կազմում	հաշվ	+


5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1 Ռեզիլենթ, երկրաձևաբանություն

Արմավիրի մարզի Արտամետի ավազակոպձային խառնուրդի երկրաբանահետախուզական աշխատանքների տեղամասը երկրաձևաբանական տեսանկյունից գտնվում է Արարատյան դաշտի սահմաններում: Գեոմորֆոլոգիական տեսանկյունից դաշտավայրի այդ մասը ներկայացնում է թույլ ալքաձև ենթահորիզոնական հարթավայրով: Տարածքի երկրաձևաբանական և լանջերի թեքության սխեմատիկ քարտեզները ներկայացված են ստորև:

Արմավիրի մարզի Արտամետի ավազակոպձային խառնուրդի երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը:

Մակերևութային ձևագրություն նկար 3



Արարատյան դաշտը միջլեռնային գոգավորություն է, եզրավորված հարավից՝ Փոքր ու Մեծ Արարատ լեռնագագաթներով և դեպի արևմուտք ձգվող Հայկական պար լեռնաշղթայով, հյուսիսից՝ Արագածի, Արա լեռան գանգվածներով և Ծաղկունյաց լեռնաշղթայով, արևելքից՝ Գեղամա, Երանոսի, Շեկասարի և Ուրցի լեռնաշղթաներով, արևմուտքում գոգավորությունը հարում է Կարսի սարահարթին։ Այս լեռնաշղթաները իրենց նախալեռնային մասերով հանդերձ հանդիսանում են Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի սնման կամ ձևավորման և տարացան /տրանզիտի/ մարզերը։

Արարատյան դաշտը տեղադրված է Արաքս գետ ավազանի միջին հոսանքում և ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք շուրջ 120 կմ երկարությամբ և 10-30 կմ լայնությամբ, գրավում է շուրջ 1300 կմ²:

Արարատյան դաշտն ունի բարդ տեկտոնական կառուցվածք: Տեկտոնական տեսակետից այն իրենից ներկայացնում է Արաքսի տեկտոնական գոտու վերադիր միջլեռնային ճկվածք: Ճկվածքի սահմաններում հետծայրավորման հետևանքով առանձնացվում են


արևմուտքից արևելք տարածված հետևյալ երկրորդ կարգի հիդրոերկրաբանական կառուցվածքները՝ Արմավիրի իջվածք, Սովետաշենի (Նուբարաշենի) բարձրացում, Արտաշատի իջվածք, Խոր Վիրապի բարձրացում, Արագոյանի (Երասխի) իջվածք, Գայլի-Դռների (Դարպասի) բարձրացում, որին դեպի արևելք հերթափոխում է Նախիջևանի ընդարձակ գոգավորությունը:

Դաշտի երկրաբանական կառուցվածքի վերին հարկը կամ այսպես կոչված ծածկույթը, որը ունի շուրջ 500մ հաստություն ներկայացված է չորրորդական հասակի լճագետային նստվածքներով և հրաբխային անդեզիտա-բազալտային լավաներով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման տարածքը գտնվում է Մերձարաքսյան գոտում: Մերձարաքսյան գոտին պալեոգոյում բնութագրվել է պարապլատֆորմային զարգացման ռեժիմով: Ալպյան տեկտոնական ցիկլում, նրա հարավային կեսում գոյություն է ունեցել պարագետսինկլինալային ռեժիմ, իսկ հյուսիսային կեսում ետեվգետսինկլինալային ռեժիմ: Մերձարաքսյան գոտու կառուցվածքում մասնակցում են միջին-վերին պալեոգոյի ու տրիասի պարապլատֆորմային տիպի տերիգեն, կարբոնատային, տուֆանստվածքային և կայծքարահրաբխածին, հրաբխածին առաջացումները:

Շրջանի լեռների մակերևույթի թեքության անկյունների և երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկարում:

Նկար 3. Մակերևույթի գերակշռող թեքություններ Նկար 4



5.2 Տեկտոնիկա, սողանքներ, սեյսմիկ բնութագիր

Հանքերնական տեղամասում գեոլոգիական երևույթներ՝ սողանքներ, քարաթափեր չեն արձանագրվել, ինչը պայմանավորված է տարածքի երկրաձևաբանական առանձնահատկություններով և տարածքի գրեթե հորիզոնական տեղադրմամբ (ընդհանուր մեղմաթեք անկում մինչև 9° անկյան տակ): Մոտակա սողանքային մարմինները ուսումնասիրվող տարածքից գտնվում է 29 կմ հեռավորության վրա՝ Կոշ բնակավայրից հյուսիս-արևելք:

Մոդանքների Նկար 5




Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման նպատակով հայցվող տարածքի սեյսմիկ պայմանների բնութագրումը կատարվել է ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի:


Համաձայն դրա՝ տեղամասը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացման մեծությունը կազմում է 0.3g կամ 300սմ/վրկ² (նկար 7): Ստորև բերվում է սեյսմիկ գոտիների քարտեզը՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՄԵՅՄՄԻԿ ՎՏԱՆԳԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Նկար 6




Սեյսմիկ շրջանցում Նկար 7



5.3 Շրջանի կլիման

Տարածաշրջանը գտնվում է Արարատյան հարթավայրում՝ խիստ ցամաքային գոտում հանդիսանում է Հարավային Կովկասի առավել չորային /երաշտային/ շրջաններից նեկում: Վերջինս հանդիսանում է հանրապետության ամենամեծ կլիմայական գոտին: Այն իրենից ներկայացնում է Հայկական Լեռնաշխարհի առավել ցածր և պարփակված մասերից մեկը: Կլիմայական գոտուն բնորոշ առանձնահատկությունը խիստ մայրցամաքային լինելն է, ջերմաստիճանի և օդի խոնավության տարեկան և օրեկան մեծ տատանումներով:

Ստորև՝ նկարում բերված է կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզը:



Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Ստորև՝ ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանի, մթնոլորտային տեղումների, քամու և ձնածածկի վերաբերյալ (ըստ մոտակա Արմավիր օդերևութաբանական կայանի տվյալների):

Կլիման

Տեղամասի տարածաշրջանի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտագործվել է «ՀՀԾՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերը» փաստաթղթի տվյալները: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական հարաչափերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխու-թյան, օդի լավորակման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ:

Կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող Արմավիր օդերևութաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները: Համաձայն

օդերևութաբանական կայանի տվյալների ուսումնասիրվող տարածքի կլիմայական շրջանը տաք է՝ շոգ ու չոր ամառով և ցուրտ ու անհողմ ձմեռով: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի անցնում 254 մմ-ից, միջին տարեկան միջին խոնավությունը 60% է, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +41.5°C, իսկ նվազագույնը՝ - 31.4°C: Գրունտի սառեցման առավելագույն խորությունը 70 սմ է: Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը 38 է, առավելագույն տասնօրյակային բարձրությունը՝ 42 սմ: Քամու միջին արագությունը տատանվում է 1.9-ից 2.8 մ/վրկ:

Աղյուսակներում ստորև ամփոփված են տեղեկատվություն՝ քամիների, օդի ջերմաստիճանի, հարաբերական խոնավության, մթնոլորտային տեղումների ու ձյան ծածկույթի վերաբերյալ:

Օդի ջերմաստիճանը՝ ըստ ամիսների

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Արմավիր	870	-4.1	-1.3	5.4	12.5	17.4	21.9	25.8	25.3	20.2	13.0	5.7	-0.8	11.8	-31.4	41.5

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Արմավիր մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը՝ ըստ ամիսների

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը՝ ըստ ամիսների, %												Միջին տարեկան, %	Միջին ամսական	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Ամենացուրտ ամսվա, %	Ամենաշոգ ամսվա, %
Արմավիր	75	70	62	56	56	50	46	47	51	61	70	76	60	75	46

Տեղումների բնութագիրը ըստ Արմավիր օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը օրական առավելագույն, մմ												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Արմավիր	18	18	23	33	43	24	13	9	11	25	20	17	254	96	158
	19	21	26	30	47	21	38	31	35	30	28	20	47		

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Արմավիր մետեոկայանի տվյալների բերված է ստորև:

Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, %								Անդրորի կրկնելիությունը, %		Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ														
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան							
Արմավիր	հունվար	7	5	17	8	9	8	28	18	77	0.5	Արլ	1.9	Հս Արմ	2.8	
		2.2	2.2	1.9	1.9	1.8	2.3	2.5	2.8							
	ապրիլ	5	7	28	11	9	9	20	11	52	1.3					
		2.8	3.4	2.5	2.7	2.7	3.7	3.0	3.7							
	հուլիս	3	8	31	16	11	7	16	8	55	1.1					
		2.1	2.5	1.9	2.2	1.1	2.6	2.7	2.6							
	հոկտեմբեր	5	4	23	16	9	7	22	14	72	0.6					
		2.2	2.8	1.9	2.9	2.8	3.6	3.1	3.8							

Մթնոլորտային օդ

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Բաղրամյան համայնքի Արտամետ բնակավայրում մթնոլորտային օդի վրա ազդեցություն կարող են ունենալ հիմնականում տրանսպորտային միջոցների արտանետումները: Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Բաղրամյան համայնքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ հրապարակված տվյալներ չկան:

Հայցվող տարածքի մթնոլորտային օդի աղտոտվածության ելակետային վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու համար օգտվել ենք «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» Ժամանակավոր առաջարկություններից /Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ³): Համաձայն «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկի՝ մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Արամուս բնակավայրը, մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ֆոնային ցուցանիշները ընդունվել են՝ փոշի՝ 0.071 մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³, ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³):

Աղտոտվածության գնահատման համար հիմք կընդունվի նշված տվյալները:

Հայցվող տեղամասի տարածքում 2025 թվականի վաղ զարնանը կատարվելու են է մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկում /որոշվելու են փոշու, ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները, ինչը հիմք է հանդիսանալու երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում մշտադիտարկումների իրականացման համար որպես ելակետային տվյալներ/:

5.4 Ջրային ռեսուրսներ

5.4.1 Մակերևութային և ստորերկրյա ջրերի որակ

Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման նպատակով հայցվող տարածքը զուրկ է բնական մակերևութային հոսքերից: Տարածաշրջանի հիմնական ջրագրական միավորը Արաքս գետն է, որի հունը հայցվող տարածքից գտնվում է 10 կմ հեռավորության վրա: Հայցվող տարածքից մոտ 6 կմ հեռավորության վրա գտնվում է Սև ջուր գետի հունը:

Հայցվող տարածքից 3-3.5 կմ դեպի արևելք անցնում է Արմավիրի ջրանցքը, որը սկիզբ է առնում Արաքս գետից: Այն կառուցվել է 1926-193թվականներին: Արմավիրի ջրանցքից սնուցվում են տեղական նշանակության ոռոգման ջրատարներ:

Արաքս գետը սկիզբ է առնում Թուրքիայի ներկայիս սահմաններում, Հայկական լեռնաշխարհի Բյուրակն բարձրավանդակի ջրբաժան սարավանդի միջլեռնային սառցադաշտային մորենային արգելափակման լճերից ու 2200-2700 մետր

բարձրությունների վրա լավային կառերից բխող աղբյուրներից: Հոսելով դեպի արևելք Արաքսն իր միջին հոսանքներում երկու անգամ մտնում է ՀՀ սահմանները, գետի ընթացքով 364-րդ և 746-րդ կմ հեռավորություններ վրա դառնալով սահմանային գետ՝ Հայաստան ու Թուրքիայի և Հայաստանի ու Իրանի միջև: Արաքսի ջրհավաք ավազանի մակերեսը կազմում է 102 հազ.կմ², որից 22.6հազ.կմ² Հայաստանի Հանրապետության տարածքում: Չնայած ակունքներում աղբյուրա-լճային սնմանը, ունի լեռնայինգետերին հատուկ գարնանային բուռն վարարումների ռեժիմ: Արարատյան դաշտի սահմաններում Արաքսը հաճախ ողողում է մերձափնյա հողերը, քանդում ավապաշտպան կառույցներն ու թմբաշարերը:

Սև ջուր գետը Արաքսի ձախ վտակն է: Սկիզբ է առնում Մեծամոր լճից՝ 860մ բարձրությունից: Երկարությունը 38կմ է, ջրհավաք ավազանը՝ 480 կմ²: ՀՀ միակ գետն է, որն ունի հարթավայրային բնույթ (միջին թեքությունը՝ 1 մ/կմ) և ստորերկրյա սնում (93%): Հոսում է Արարատյան դաշտի ճահճապատ տեղանքներով: Տարեկան միջին ծախսը 33,9 մ³/վ է (Ռանչյար գ.): Խոշոր վտակը Քասաղն է: Ռանչյար դիտակետում Սև ջուր գետի հիդրոլոգիական բնութագրիչները ներկայացված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 6.

Գետ-դիտակետ	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²	Բազմամյա միջին տարեկան ելքը, մ ³ /վ	Հոսքի մոդուլը, լ/վ*կմ ²	Հոսքի շերտը, մմ	Հոսքի ծավալը, մլն.մ ³ /տ	Առավելագույն ելքը, մ ³ /վ	Նվազագույն ելքը, մ ³ /վ
Սև ջուր-Ռանչյար	3540	24.3	6.88	217	768	152	5.70

Գետի մոնիթորինգը իրականացվում է երեք կետում՝ №40 10կմ ք. Վաղարշապատից հարավ, №41՝ 11կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք և №42՝ 0.5 գյ. Ռանչյարից ներքև (նկար 8):

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոգեոլոգիականության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հրապարակումների՝ 2022 թվականի 2-րդ եռամսյակում կատարված մշտնդիտարկումների արդյունքների՝ Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավարևելք ապրիլին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ռանչյար գյուղից ներքև հատվածում ապրիլին և մայիսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս) (նկար 9):

Արարատյան դաշտի (Արմավիրի և Արարատի մարզի տարածքներ) սահմաններում է գտնվում ստորերկրյա քաղցրահամ խմելու ջրերի արտեզյան ավազանը, որը տարածքի էկոլոգիական համակարգի որոշիչ բաղադրիչն է: Ավազանը կազմված է ստորերկրյա ջրերի հինգ ավազաններից (նկար 10) :

Ստորերկրյա ջրերի հինգ ավազանների ջրային ռեսուրսները հաշվարկվել են 1984 թվականին և ներկայցված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 7.

Արարատյան արտգյան ավազանի ջրային ռեսուրսները

Ստորերկրյա ջրերի ավազանը	Աղբյուրների հաստատված պաշարները, A+B կարգի, լ/վրկ	Հիմնական հորատանցքերի հաստատված պաշարները, A+B կարգի, լ/վրկ
--------------------------	---	---

Արագդայանի իջվածք		2138.9
Արտաշատի իջվածք	224.5	3056.7
Գայ-Հայկաշենի հանքավայր		5063.6
Հոկտեմբերյանի իջվածք	18436.6	31880.8
Սովետաշենի բարձրացում	3260.4	9601.8
Ընդամենը	21921.2	51741.8

Հանքավայրի շրջանի՝ Արարատյան դաշտի նստվածքային ավազակոպձային և կոպձագլաքարային առաջացումների վերին հորիզոնի հետ գրունտային ջրերի հորիզոնը կապված չէ, ավազակոպձային կուտակները ջրակալված են: Հարակից տարածքներում հանքավայրի շահագործման փորձը վկայում է, որ ավազակոպձային կուտակը ջրազուրկ է, գրունտային ջրերի հորիզոններ մինչև 8 մ խորություններում չեն դիտարկվել, իսկ անձրևաջրերը ներծծվելով ջրաթափանց ավազակոպիձներով բեռնաթափվում են Արաքսի հովտում:

5.5 Հողեր

Դիտարկվող տարածաշրջանում տարածված են ոռոգելի գորշ մնացորդային կավային հողերը, իսկ բուն երևակման տարածքը ներկայացված է թերի զարգացած աղուտ-ալկալի հողերի և հիմքի արմատական ապարների համալիրներով (նկար 9): Գորշ ոռոգելի հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի բնահողային շրջանում՝ Արաքս գետի և նրա ձախակողմյան վտակների բերվածքների վրա, մարդու ներգործության պայմաններում: Այն հատվածներում, որտեղ հանքայնացված խորքային ջրերը մոտ են մակերեսին, առաջացել են նաև հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողեր: Այս հողերը տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում: Այս տիպի հողերում հողագոյացնող պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման նպատակով հայցվող տարածքի հողերը ներկայացված են գորշ կիսաանապատային տիպի գլաքարայի և քարքարոտ կարբոնատային ցեմենտացված ենթատիպերով, որոնց հզորությունը կազմում է միջինը 0.2մ:


Այս տիպի հողերում հողագոյացնող պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում: Հումուսի քանակը կազմում է 3-3.5%: Դրանց քիմիական հատկությունները ներկայացված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 8.

Հողի տիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուս, %	CO ₂ , %	Կլանված հումքերի գումարը, մ.էկվ. 100գ հողում	pH-ը ջրային լուծված քիմիական նյութերի համակցությամբ
Մարգագետնային գորշ ոռոգելի	0-21	1.8	6.0	26.8	8.4
	21-43	1.6	6.3	28.0	8.4
	43-65	0.9	7.9	31.9	9.0
	65-92	0.8	6.8	22.0	9.4

	92-182	0.9	6.8	36.8	9.5
--	--------	-----	-----	------	-----

Հայցվող տարածքում բացակայում են խախտված կամ ռեկուլտիվացված տարածքները: Տարածքում 2022 թվականին կատարվել են հողերի նմուշարկում, վերցվել է մեկ համախառն նմուշ, որը կազմվել է 3 կետից վերցված զանգվածի խառնուրդով: Նմուշարկման արդյունքում ավազակավային-կավազային շերտում արձանագրվել է Si 201209մգ/կգ, Mn 1003մգ/կգ, P 613 մգ/կգ, Fe 32047մգ/կգ, K 16402մգ/կգ, Ca 6721 մգ/կգ, Zn 10.3մգ/կգ (նմուշարկումը կատարվել է 2022 թվականի նոյեմբերին):



Նկար 11. ՀՀ հիմնական հողատիպերի քարտեզ՝ ըստ ՀՀ ազգային ստուսի

6.5 Բուսական և կենդանական աշխարհ


Հայցվող տարածքի շրջանում բուսականությունը ներկայացված է համեմատաբար երիտասարդ, ստորին չորրորդական դարաշրջանից ՀՀ տարածքում ի հայտ եկած աղասեր անապատային բուսատեսակներով (նկար 12):

Բուն տարածքը օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով, բնական բուսածածկը վերափոխված է նշակովի բուսատեսակներով, աճեցվում են բանջարաբուստանային մշակաբույսեր, հացահատիկ:

Տարածքում նշվել են գարի մանուշակագույն (*Hordeum violaceum*), օշան հավամրգանման (*Salsola ericoides* Bieb.), սաքսազան կոնաձև (*Halocnemum strobilaceum* Pall. Bieb), անցողունիկ հեռացած (*Puccinellia distans*), սեզ սողացողը (*Elytrigia repens*), սեզախոտ անապատային (*Agropyron desertorum*), հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*), անապատասեզ հեռացած (*Eremopyrum distans*), դաշտավլուկ սոխուկային (*Poa bulbosa*), օշինդր բուրավետը (*Artemisia fragrans* Willd.), լվածադիկ արծաթատերևը (*Tanacetum argrophyllum* C. Koch. Tzvel.), հետերանթելիում մազակիր (*Heteranthelium piliferum*), փշոտ կապարը (*Capparis spinosa*), աղավնիշ միջին (*Spergularia media*), թելուկ զարշահոտ (*Chenopodium*

vulvaria), կյուն սուր (Juncus acutus) և սովորական եղեգը (Phragmites communis), որն հանքավայրի առավել խոնավ, մասամբ ջրածածկ հատվածներում:

Բուսականություն Նկար 10



Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ազդեցությունը պահպանման պահպանության ենթակա բուսատեսակների վրա գնահատելու նպատակով ուսումնասիրվել են ՀՀ բույսերի Կարմիր գրքերում գրանցված տվյալները և տեղեկատվությունը: Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման Արմավիրի մարզում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ բուսատեսակները.

- օշան Թամամշյանի (*Salsola tamamschjanae* Iljin) – վտանգված տեսակ, հայտնի է մեկ մասնատված պոպուլյացիա: Հայտնի է Արմավիր քաղաքի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 7կմ հեռավորության վրա: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ.մ. 700-1000մ բարձրության վրա, անապատում-կիսաանապատում: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում;
- օշան թաղիքային (*Salsola tomentosa* (Moq.) Spach) – վտանգված տեսակ, հանդիպում է Երևանի ֆլորիստիկ շրջանում (Արմավիր քաղաքի շրջակայք, հայցվող տարածքից մոտ 7կմ հեռավորության վրա): Աճում է ստորին լեռնային գոտում, ծ.մ. 800-1200մ բարձրությունների վրա, քարքարոտ գիպսակիր, կավային լանջերին, կիսաանապատներում: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում;
- սֆերոֆիզա աղուտային (*Sphaerophysa salsula* DC.) – խոցելի տեսակ, հայտնի են երկու տարանջատված պոպուլյացիա, որոնց մակերեսը 500ք.կմ-ից պակաս է:

հայտնի է Արմավիր քաղաքի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 7կմ հեռավորության վրա: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ.մ. 800-900մ բարձրության վրա, աղակալած ճահիճներում,

-աղածաղիկ կուլպական-վտանգված տեսակ, հանդիպում է ՀՀ Արմիրի մարզին տարածքում, ստորին լեռնային գոտում, ծ.մ. 800-1300 մբարձրություններ վրա, թեք բլրակների, երրորդական դարաշրջանի գիպսատար կավերի վրա,

- սարսազան կոնաձև- վտանգված տեսակ, աճում է ստորին լեռնային գոտում, ծ.մ. 850-900մ բարձրությունների վրա, ուժեղ աղակալված փորփոշ, կամ խոնավ աղուտներում: Պոպուլյացիայի մի մասն աճում է Երասխահուն գյուղի շրջակայքում՝ Որդան կարմիր արգելավայրինտարածքում, հայցվող տարածքից ավելի քան 20 կմ հեռավորության վրա,

-կալախոտ կասպիական-վտանգված տեսակ, աճում է ստորին լեռնային գոտում, ծ.մ. 800-900 մ բարձրությունների , փորփոշ աղուտներում: Պոպուլյացիայի մի մասն աճում է Երասխահուն գյուղի շրջակայքում՝ Որդան կարմիր արգելավայրինտարածքում, հայցվող տարածքից ավելի քան 20 կմ հեռավորության վրա,

- աղահասկիկ Բելանժեյի-վտանգված տեսակ, աճում է ստորին լեռնային գոտում, ծ.մ. 800-900 մ բարձրությունների , ուժեղ աղակալված հողերի վրա փորփոշ կամ խոնավ աղուտներում: Պոպուլյացիայի մի մասն աճում է Երասխահուն գյուղի շրջակայքում՝ Որդան կարմիր արգելավայրինտարածքում, հայցվող տարածքից ավելի քան 20 կմ հեռավորության վրա,

Հայցվող տարածքում ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված, վերը նշված տեսակները չեն դիտարկվել:

Դտարկվող տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է տափաստանային-անապատային լանդշաֆտներին բնորոշ, հանրապետության տարածքում լայն տարածում ունեցող կենդանական ձևերով:

Կարածրաթևերից նշվել է *Mylabris fusca* Olivier, *Omophlus flavipennis* Kuster, *Exochomus melanocapalus* (Zubkov):

Սողուններից դիտարկվել է *Ophisops elegans* Menetr., *Eremias strauchi* Kessler., հարակից գյուղերի բնակիչների վկայությամբ հանդիպում է ջրային լորսու (*Natrix tessellata*):

Բազմաթիվ են դաշտամկները (*Microtus arvalis*):

Արմավիրի մարզում ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից հայտնի են՝

- ֆիտոդրիմադուզա հայկական – սահմանափակ արեալող հազվագյուտ տեսակ է: Տարածված է Շենավան գյուղի շրջակայքում, հայցվող տարածքից 5 կմ հեռավորության վրա: Ապրում է տարբեր տեսակի կսաանապատներում՝ մինչև 1100 ծ.մ.բ.,

- հսկա գիշաճանձ - սահմանափակ արեալող հազվագյուտ տեսակ է: Հանդիպում է Հոկտեմբեր /ներկայում՝ Սարդարապատ/ գյուղի շրջանում, կիսաանապատում և ավազուտ անապատում, հայցվող տարածքից մոտ 7.2 կմ հեռավորության վրա,

- Անդրկովկասյան տակիրային կլորագլուխ –խիստ սակավաթիվ, անհետացող տեսակ: հայտնի է Արմավիրի մարզի Արմավիրի և Բաղրամյանի տարածաշրջաններում: Բնակվում է նոսր չորասեր բուսածածկով ավազուտային և աղուտային կիսաանապատներում, 800-1050մ ծ.մ. բարձրության վրա,

- լայնական ռզնի – հազվադեպ հանդիպող տեսակ է, տարածված է Արմավիրի մարզի չոր տափաստաններում, կիսաանապատներում և անապատներում, գերադասում է խաղողի այգիները, պտղատու այդիները և տնամերձ բանջարանոցները,

Զարդավոր չրխկան – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: հայտնի է Փշատավան գյուղի շրջակայքում /հայցվող տարածքից 13 կմ հեռավորության վրա/ հոսուն ջրերում,

- ակրամովսկու շադինիա (*Shadinia akramovskii*) – սահմանափակ արեալով և կտրտված ապրելավայրով հազվագյուտ տեսակ է, գնահատված է որպես «կրիտիկական վիճակում գտնվող»: հայտնի են Սև ջուր գետի ակունքներում՝ Առատաշեն գյուղի մոտակայքում, հայցվող տարածքից մոտ 11 կմ հեռավորության վրա;

- Վան բրինկի նետիկ (*Coenagrion vanbrinkae* Lohmann) – հազվագյուտ տեսակ, գնահատվել է որպես «խոցելի»: Հայտնի է Տարոնիկ գյուղի մոտ, հայցվող տարածքից մոտ 9 կմ հեռավորության վրա;

- Լինդենի նետիկ (*Erythromma lindenii*) - սահմանափակ արեալով ծայրահեղ հազվագյուտ տեսակ է, գնահատված է որպես «վտանգված»: Հայտնի է Տարոնիկ գյուղի մոտ, հայցվող տարածքից մոտ 9 կմ հեռավորության վրա;

- ծովային քարադր (*Charadrius alexandrinus*) – հազվագյուտ տեսակ է խիստ սահմանափակ արեալով, հայտնի է Արմավիր քաղաքի շրջակայքում, հայցվող տեղամասից մոտ 7 կմ հեռավորության վրա;

- Տափաստանային արծիվ – քիչ քանակությամբ հանդիպող խոցելի տեսակ, որը հանդիպում է Հայաստանում, այդ թվում Արմավիրի մարզում՝ չորի ընթացքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

- մարգագետնային ծիծառակտցար (*Glareola pratincola*) – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Տարոնիկ գյուղի մոտ, հայցվող տարածքից մոտ 9 կմ հեռավորության վրա:

Համաձայն հայցվող տարածքում իրականացված դիտարկումների արդյունքների, որոնք իրականացվել են երթուղիներով և կենսագործունեության մնացորդների ուսումնասիրությունով, ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված, վերը նշված կենդանական տեսակները ուսումնասիրվող տարածքում չեն դիտարկվել:

6.6. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ուսումնասիրվող տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև հայցվող տեղամասին հարակից տարածքներում: Արմավիրի մարզում է գտնվում «Որդան կարմիր» պետական արգելավայրը, որը զբաղեցնում է 219.85 հեկտար տարածք, բաղկացած է երկու առանձին տեղամասերից՝ Արագափի գյուղական համայնքի հյուսիս-արևմտյան մասում (198.33 հեկտար) և Զրառատի գյուղական համայնքի հյուսիսային մասում (21.52 հեկտար)՝ Արարատյան հարթավայրում, ծովի մակերևույթից 835-850 մետր բարձրության վրա:

Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

ա) արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումն ու պահպանությունը:

բ) Արարատյան հարթավայրի աղուտային (հալոֆիտ) ցուցանմուշային էկոհամակարգերի էկոլոգիական հավասարակշռության, այդ թվում՝ ջրային ռեժիմի պահպանությունը.

գ) արգելավայրի վայրի բուսական և կենդանական աշխարհի էկոլոգիական միջավայրի պահպանությունը.

դ) հազվագյուտ ու անհետացման վտանգի տակ գտնվող բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

ե) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջություն իրականացնելու համար անհրաժեշտ նախադրյալների ապահովումը:

Արգելավայրի Արագափ տեղամասը գտնվում է հայցվող տարածքից մոտ 8կմ, Ջրառատի տեղամասը՝ մոտ 16կմ հեռավորությունների վրա:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները: Բնության հուշարձաններից Արմավիրի մարզում են գտնվում.

Աղյուսակ 9

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	2	3
1	«Մեծամոր» լիճ (ջրագրական հուշարձան) և Մեծամոր լճի ջրաճահճային բուսականություն (կենսաբանական հուշարձան)	Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հս-արմ Մոտ 25 կմ հայցվող տարածքից
2	«Ավազասեր (պսամոֆիլ) բուսականություն»	Արմավիրի մարզ, քաղ. Վաղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ Մոտ 33 կմ հայցվող տարածքից

5.6. Պատմամշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության 15.03.2007թ.-ի N385-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արմավրի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Բաղրամյան խոշորացված համայնքի Արտամետ բնակավայրում պատմության և մշակույթի հուշարձաններ հաշվառված չեն:

Այնուամենայնիվ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի 438 որոշման 43-րդ կետի որոշման պահանջներով՝ մասնավորապես՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազոր մարմին»>:

6. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ենթակառուցվածքներ

Ուսումնասիրվող տարածքը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում: ՀՀ Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևմտյան հատվածում: Մարզկենտրոնը Արմավիր քաղաքն է, որի հեռավորությունը Երևանից 48կմ է: Մարզն ունի 3 քաղաքային (Արմավիր, Վաղարշապատ, Մեծամոր) և 94 գյուղական համայնքներ: Համայնքներից 7-ը սահմանամերձ են: Մարզը արևմուտքից և հարավից սահմանակից է Թուրքիային, հյուսիսում սահմանակից է ՀՀ Արագածոտնի մարզին, արևելքից՝ Երևանին և ՀՀ Արարատի մարզին: ՀՀ պետական սահմանից մարզին բաժին է ընկնում 130.5 կմ հատված:

Մարզի մշտական բնակչության քանակը 01.01.2022թ.-ի դրությամբ կազմել է 264.4հազ.մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 82.5հազ.մարդ, գյուղականը՝ 181.9հազ.մարդ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը ըստ արտադրության բաժինների բաշխված է հետևյալ կերպ.

- հանքագործական արդյունաբերություն – 918.7մլն.դրամ,
- մշակող արդյունաբերություն – 84352.9մլն.դրամ,
- էլեկտրաէներգիայի, գաի, ջրի արտադրություն և բաշխում – 36002.2մլն.դրամ,
- ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում – 1242.2մլն.դրամ:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 181.0մլրդ.դրամ, այդ թվում բուսաբուծություն 133.3մլրդ.դրամ, անասնաբուծություն՝ 47.7մլրդ.դրամ:

Հացահատիկային և հատիկաբնդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները զբաղեցրել են 4267հա, բերքատվությունը՝ 41.1ց/հա, համախառն բերքը 18.0հազ.տ: Կարտոֆիլի մշակման համար նույն ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1182հա, 389.5ց/հա, 46.6հազ.տ:

Իրականացվել են 23228.1մլն.դրամի շինարարական և 10322.8մլն.դրամի՝ շինմոնտաժային աշխատանքներ:

Գործարկվել է 2139մ² բնակելի շենք և 746 աշակերտական տեղով հանրակրթական ուսումնական հաստատություն:

Արմավիրի մարզում ներկայումս գործում են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող 6 ուսումնական հաստատություններ՝ Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ, Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ, Արմավիրի արվեստի պետական քոլեջ, Էջմիածնի պետական քոլեջ, Արմավիրի բժշկական քոլեջ և Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան:

Մարզում առկա է համայնքային ենթակայության 85 մշակույթի տուն, որից Արմավիրի տարածաշրջանում՝ 38, Էջմիածնի տարածաշրջանում՝ 40, Բաղրամյանի տարածաշրջանում՝ 7: Մշակույթի տներից լիարժեք գործում են 16-ը:

Գրադարանային ֆոնդը կազմում է 1161830 կտոր գիրք՝ ՀՀ մշակույթի նախարարության, Հայաստանի գրողների միության, «Գիրք» հիմնադրամի, «Արևիկ» հրատարակչության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից կատարված նվիրաբերությունների շնորհիվ:

Գործում է 9 թանգարան. Սարգսրապատի հուշահամալիր-Հայաստանի ազգագրության և ազգային ազատագրական պայքարի պատմության պետական

թանգարան, Մուսալեռի հուշահամալիր-թանգարան, Զվարթնոց պատմաճարտարապետական արգելոց-թանգարան, Էջմիածնի գավառագիտական թանգարան, Էջմիածնի Խորեն Տեր-Հարությանի անվան թանգարան, Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարան, Մեծամորի պատմահնագիտական թանգարան, Միեր Աբեղյանի անվան թանգարան, Բաղրամյանի «Արաբոյի և ֆիդայիների հայրենասիրական թանգարան», որոնց հավաքածուները պարբերաբար համալրվում են նոր թանգարանային նմուշներով՝ հնագիտական նոր նյութերի և անհատների կողմից կատարած նվիրաբերությունների շնորհիվ:

Մարզում գործում է 9 մարզադպրոց, ինչպես նաև նշված մարզադպրոցների մասնաճյուղեր մարզի տարբեր համայնքներում: Համայնքային ենթակայության մարզադպրոցներում գործում են 92 խմբեր՝ 13 մարզաձևերից: Արտադպրոցական և արտադասարանական մարզական խմբերի պարապմունքներում ընդգրկված են դպրոցահասակ երեխաների 30-40%-ը: Մարզի հանրակրթական դպրոցներում և համայնքներում գործում են 189 խմբեր՝ 20 մարզաձևերից: Արմավիրի մարզում մարզպետարանի ենթակայությամբ գործող մարզադպրոցներ չկան: գործում են 61 առողջապահական հիմնարկներ, որոնցից 7-ը՝ մարզպետարանի ենթակայության, այդ թվում՝ բժշկական կենտրոններ - 2 (Արմավիր, Մեծամոր), հիվանդանոց - 1 (Վաղարշապատ), ծննդատուն - 1 (Վաղարշապատ), պոլիկլինիկա - 2 (Վաղարշապատ, Բաղրամյան), արյան փոխներարկման կայան - 1 (Արմավիր): Համայնքային ենթակայության թվով 52 «Գյուղական բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ներ ընդգրկում են 43 բուժակմանկաբարձական կետեր:

Բաղրամյան համայնքի Արտամետ բնակավայր

Հետախուզման նպատակով հայցվող տարածքը գտնվում է Հայաստանի Արմավիրի մարզում, Բաղրամյան խոշորացված համայնքի Արտամետ բնակավայրի վարչական սահմաններում: Հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 26 կմ հարավ-արևմուտք, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 965 մ: Արտամետ գյուղի բնակչությունը 01.01.2012թ. դրությամբ կազմել է 228 մարդ: Բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

Արտամետ բնակավայրի հողային հաշվեկշռը ներկայացված է ստորև աղյուսակ 10-ում:

Հ/Հ	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Ընդամենը
1	2	3	4
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահողեր	708.10
1.2		բազմ տնկարկներ	691.10
1.2.1		այդ թվում	428.02
1.2.2		խաղողի այգի	263.08
1.2.3		այլ բազմամյա	-
1.3		խոտհարք	
1.4		արոտ	1449.96
1.5		այլ հողատեսքեր	149.59

1		ընդամենը	2998.75
---	--	----------	---------

Երևական տարածքը խախտված չէ ընդերքօգտագործման աշխատանքներից: Հայցվող տեղամասում նախնական դիտարկումների արդյունքում պարզվել է, որ երևական տարածքում, որտեղ առկա է հողաբուսաշերտ, հզորությունը տատանվում է 0.2մ:

Ուսումնասիրվող տեղամասի տարածքը ներկայացված է Արտամետ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով, որոնց գործառնական նշանակությունը արտավայրեր կամ այլ գործառնական նշանակության հողատեսքեր են:

Երևական աշխատանքների ծրագիրը ներկայացվել է Բաղրամյան համայնքի Արտամետ բնակավայրի բնակիչներին: Քննարկվել է հետագայում արդյունահանման աշխատանքներին համայնքի բնակիչների ներգրավվման հարցը: ՇՄԱԳ-ին կից ներկայացվում է հանրային լսումների տեսաձայնագրությունը և արձանագրությունը:

Իրավիճակային քարտեզ Նկար 11



7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արմավիրի մարզի Արտամետի ավազակոպճային խառնուրդի երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային երթուղիների, հետախուզահորերի անցման, և համապատասխան նմուշարկման աշխատանքներով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող տեխնածին ճնշումների նկարագիրը ներկայացված է ստորև:

Մթնոլորտային օդ.

Ավազակոպճային խառնուրդի հետախուզման աշխատանքների ընթացքում փոշու և վնասակար գազերի արտանետումները կապված կլինեն հետախուզահորերի անցման և ավտոտրանսպորտի շարժման հետ:

Տրանսպորտի շարժման ժամանակ 1կմ վազքի դեպքում մթնոլորտ է արտանետվելու մոտ 0.04գ/վրկ (հաշվի առնելով տրանսպորտի միջին բեռնունակությունը, տեղաշարժման միջին արագությունը, ճանապարհների վիճակը, վազքի երկարությունը, մակերեսային շերտի խոնավությունը) կամ 0.03տ :

Դիզելային վառելիքի տարեկան ծախսը կազմում է 26տ կամ 0.1տ/օր: Մեծ բեռնունակությամբ ավտոտրանսպորտի (բեռնատար և էքսկավատոր) վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումներն են.

Աղյուսակ 11.

Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումների քանակը, տ/տարի	Արտանետումների քանակը, գ/վրկ
CO	36.4	0.95	0.127
N ₂ O	0.122	0.003	0.0004
ՑՕՄ	8.16	0.21	0.028

Նախնական հաշվարկներին համաձայն, տեղամասի տարածքում ծրագրավորված աշխատանքների իրականացման ժամանակ վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) և փոշու առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Հարկ է նշել որ ուսումնասիրվող հանքերնական տարածքը բնակավայրերից գտնվում է նվազագույնը 2.5 կմ հեռավորության վրա և բնակելի տարածքները չեն ենթարկվի ազդեցության:

Ջրային ռեսուրսներ.

Ավազակոպճային խառնուրդի երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում ջրային ռեսուրսների աղտոտումը բացառվում է, քանի որ տեղամասի տարածքում, կամ հարակից տարածքներում մակերեսային և գրունտային ջրերը բացակայում են իսկ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում և հորատային լուծույթներ չեն օգտագործվում :

Տարածաշրջանի ամենախոշոր ջրագրական միավոր Արաքս գետն է, որի Սև ջուր վտակը հոսում է երևակման տարածքից մոտ 5-6 կմ հեռավորության վրա և չի կարող ենթարկվել որևէ ազդեցության:

Ուսումնասիրության աշխատանքների դաշտային փուլը կտևի 1-2 ամիս: Ըստ գործող նորմատիվների՝ 1մ² տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է 1,5լ:

Փոշեռառաջացման օջախների ջրցանման, նպատակով օգտագործվելիք ջուրը 10ս քանակով կբերվի մոտակա՝ Արտամետ բնակավայրի ջրամատակարարման ցանցից: Խմելու և կենցաղային նպատակներով օգտագործվող ջրի ծախսը կազմում է $0.016\text{մ}^3/\text{մարդ}$, 3 աշխատողների համար օրեկան $0.048\text{մ}^3/\text{օր}$ ծավալով նախատեսվում է գնել մոտակա Արտամետ, կամ Բաղրամյան բնակավայրերի առևտրի կետերից շալցված եղանակով և յուրաքանչյուր օր աշխատանքները սպասարկող մեքենայով տեղափոխել տեղամասի տարածք:

Դաշտային աշխատանքները պայմանագրային հիմունքներով իրականացվելու են մասնագիտացված ընկերությունների կողմից, որոնք ապահովված են համապատասխան կենցաղային պայմաններով /ջրամատակարարում, ջրահեռացում և այլն/ կահավորված վագոն-տնակներով: Տեղամասում տեղադրվող շարժական վագոն-տնակը նախատեսված է աշխատակիցների հանգստի և սննդի ընդունման համար հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով: Ջրցուղարան չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատակիցները հարակից բնակավայրերի բնակիչներն են և երեկոյան վերադառնում են իրենց բնակության վայրը:

Աշխատողների տնտեսակենցաղային կեղտաջրերը հեռացվելու են վագոն տնակին ամրացված պլաստիկ տարողության մեջ, որը դատարկվում է հատուկ ծառայության կողմից:

Հողային ծածկույթ.

Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման նպատակով հայցվող տարածքի հողերը ներկայացված են գորշ կիսաանապատային տիպիկ գլաբարայի և քարքարոտ կարբոնատային ցեմենտացված ենթատիպերով, որոնց հզորությունը կազմում է միջինը 0.2մ :

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ խախտված հողերի վերականգնման աշխատանքները ներառում են միայն հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած լեռնային զանգվածի հետ լցման աշխատանքները, որը կատարվելու է ձեռքով՝ առանց տրանսպորտային ծախսերի և լրացուցիչ ֆինանսական միջոցների: Հետախուզահորերի անցման ժամանակ հողի վերին շերտի պահպանման և ռեկուլտիվացիոն աշխատանքները և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներկայացված են ընկերության կողմից կազմված երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված ռեկուլտիվացիայի գումարի մեջ:

Արմավիրի մարզի Արտամետի ավազակոպճային խառնուրդի երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը, որը աշխատանքների ավարտից հետո ենթակա է վերականգնման, կազմում է՝ հետախուզահորեր - 36.0 մ^2 :

Հետախուզահորերի անցման ժամանակ հողի վերին շերտի պահպանման նպատակով ծրագրով նախատեսվում է դրանց տարածքից նախապես հանել հողի շերտը /միջին հզորությունը տարածքում կազմում է 0.2մ / և ժամանակավոր կուտակել 1 մ հեռավորության վրա, աշխատանքների ավարտից հետո օգտագործել խախտված տարածքի վերականգնման համար:

Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է տարածքի մակերեսից և հողաբուսաշերտը վերականգնվում է 0.2մ խորության վրա: Հանվող հողի վերին

շերտը նախատեսված է կուտակել անմիջապես փորվածքի կողքին: Հետախուզական աշխատանքների ավարտից հետո, խախտված տարածքները կվերականգնվեն՝ օգտագործելով կուտակված հողաշերտը:

Պահպանության ենթակա և հետագայում ռեկուլտիվացիայի/տարածքների վերականգնման նպատակով օգտագործվող հողի շերտի ծավալը հետախուզահորերի ընդհանուր մակերեսում՝ $16 \times 2,25 = 36.0$ մ² կազմում է $36.0 \times 0.2 = 7,2$ մ³:

Այս աշխատանքները կատարվելու են ձեռքով՝ III կարգի ապարներով: Ռեկուլտիվացիոն աշխատանքները կատարվելու են անմիջապես աշխատանքների ավարտից հետո՝ հետախուզական աշխատանքներին մասնակցող անձնակազմի և տեխնիկայի ուժերով: Ընդ որում հետլցման աշխատանքները կիրականացվեն առանց լրացուցիչ պահանջվող ֆինանսական միջոցների: Հետախուզահորերի անցման ժամանակ հողի վերին շերտի պահպանման և ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներկայացված են ընկերության կողմից կազմված կազմված երկրաբանական ուսումնասիրության ծրագրում որտեղ տարածքների վերականգնման, ներառյալ կենսաբանական, համար անհրաժեշտ գումարը հաշվարկվել է՝ 152840 ՀՀ դրամ: Կենսաբանական ռեկուլտիվացիայի նպատակով տարածքում կկատարվի նաև տարածքին բնորոշ խոտային բուսականության սերմերի ցանք: Այդ աշխատանքները կատարվելու են ձեռքով:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար անհրաժեշտ միջոցառումները և ծախսերը մանրամասն ներկայացվել է ՇՄԱԳի «Ռեկուլտիվացիա» բաժնում:

Բուսական և կենդանական աշխարհ.

Արմավիրի մարզի Արտամետի ավազակոպճային խառնուրդի երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման արդյունքում բացասական ազդեցությունները բուսական և կենդանական աշխարհի վրա զգալի չէ, քանի որ տարածքում արձանագրված բուսատեսակները լայն տարածում ունեն տափաստանային լանդշաֆտներում և հանդիսանում են «ֆոնային» տեսակներ:

Տեղամասի տարածքում չեն դիտարկվել խոշոր կաթնասունների բներ, որջեր: Չեն արձանագրվել նաև պահպանվող, էնդեմիկ, ՀՀ բույսերի կամ կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ:

Ուսումնասիրության աշխատանքների ժամանակ իրականացվող մշտադիտարկումների արդյունքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

1) Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով առանձնացնել պահպանվող գոտիներ:

2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, երե դրանք կարող են բերել նշված

բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացման ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը, տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով: Աշխատանքները կիրականացվեն ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանող որոշման (31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն) հիմնադրություններին համապատասխան:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր.

Տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների, կամ բնության հուշարձանների սահմաններում: ԲՀՊ տարածքներ չկան նաև հարակից բնակավայրերի մոտակայքում:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության
նախնական գնահատական մատրիցը **Աղյուսակ 18**

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ		
	Հորատման աշխատանքներ	Ավտոտրանսպորտ	Փորձնական հանույթ
Մթնոլորտային օդ	ցածր կարճատև	ցածր կարճատև	ցածր կարճատև
Ջրեր	-	-	-
Հողեր	ցածր կարճատև	ցածր կարճատև	ցածր կարճատև
Կենսաբազմա- զանություն	աննշան	աննշան	աննշան
Պատմամշակութային հուշարձաններ	-	-	-

Աղմուկի մակարդակ և թրթռում

Համաձայն սանիտարական նորմերի՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարապաշտպանիչ գոտի սահմանված չէ: Երևակման տեղամասից մնչև բնակելի ամենամոտ հեռավորությունը կազմում է մոտ 2.6 կմ: Հարկ է նշել, որ Արտամետի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում

երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում աղմուկի առաջացման աղբյուրներն են հանդիսանում միայն հետախուզահորերի անցման աշխատանքները և ճանապարհներին տրնասպորտի տեղաշարժը, սակայն դրանց երթևեկության ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

Ուսումնասիրվող տեղամասում Ծրագրով նախատեսվող աշխատանքներից և տրանսպորտային միջոցների տեղաշարժից առաջացող գոմարային հաշվարկային ձայնային բնութագիրը Արտամետ բնակավայրին մոտ կկազմի՝ 20դԲԱ (նորման 45դԲԱ) պայմանավորված աշխատանքների տեսակով, հետևաբար, ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջացող աղմուկն ու թրթռումը ազդեցություն չեն ունենա բնակելի տարածքների և տեղում աշխատողների վրա:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակում

ՀՀ սահմանված աղմուկի նորմերը

Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը

Ընկալիչ	Ժամերը	dBL _{AEQ}	dBL _{AMAX}
Բնակելի և	06:00-22:00	55	70
հասարակական շենքերի մոտ	22:00-06:00	45	60

Աշխատանքային հրապարակում առաջացող աղմուկի նվազեցման նպատակով մեքենաները և օգտագործվող տեխնիկական միջոցները /տվյալ դեպքում հորատման հաստոցները/ պետք է սարքավորված լինեն ձայնախլացուցիչներով:

Աշխատանքներում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Համապատասխան միջոցառումների կիրառման դեպքում աշխատանքների ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը սանիտարական գոտուց դուրս չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Կենցաղային պայմաններ

Դաշտային աշխատանքները պայմանագրային հիմունքներով իրականացվելու են մասնագիտացված ընկերությունների կողմից, որոնք ապահովված են համապատասխան կենցաղային պայմաններով /ջրամատակարարում, ջրահեռացում և այլն/ կահավորված վագոն-տնակներով: Տեղամասում տեղադրվող շարժական

վագոն-տնակը նախատեսված է աշխատակիցների հանգստի և սննդի ընդունման համար հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով: Ջրցուղարան չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատակիցները հարակից բնակավայրերի բնակիչներն են և երեկոյան վերադառնում են իրենց բնակության վայրը:

Աշխատողների տնտեսակենցաղային կեղտաջրերը հեռացվելու են վագոն տնակին ամրացված պլաստիկ տարողության մեջ, որը դատարկվում է հատուկ ծառայության կողմից:

Դաշտային աշխատանքները, պայմանագրային հիմունքներով, իրականացվելու են մասնագիտացված ընկերությունների կողմից, որոնք հիմք ընդունելով առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15 հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները կապահովեն իրենց աշխատակիցների կենցաղային պայմանները:

Թափոնների առաջացում

Երկրաբանական ուսումնասիրության ժամանակ կարող են առաջանալ հետևյալ տեսակի թափոնները.

- չտեսակավորված կենցաղային աղբ, որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004: Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Օրեկան ծավալը՝ 1.5կգ/մարդ;

- բանեցված շարժիչների յուղեր, վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 54100201 02 03 3: Կազմը՝ յուղ 94.6%, մեխանիկական խառնուկներ 2.1%, ջուր 3.2%: Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիոն ակտիվության տեսակետից ոչ ակտիվ, ռեակցիոնունակ չէ: Թափոններն առաջանում են տրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչների շահագործման ընթացքում: Մնացորդային քանակը կկազմի՝ 15 լիտր:

- Դիզելային յուղերի մնացորդներ՝ դասիչ՝ 5410030302033, բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ մնացորդներ: Բնութագիր՝ հրդեհավտանգ է, առաջացնում է հողի, ջրի աղտոտում: Թափոններն առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում: Մնացորդային քանակը կկազմի 20լ:

Յուղերի, քսայուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումն ըստ անհրաժեշտության, նախատեսվում է կատարել համապատասխան ծառայություններ մատուցող մասնագիտացված կազմակերպություններում՝ հարակից բնակավայրերում:

Վտանգավորության առաջինից 4-րդ դասի թափոնների գործածությունը, այդ թվում՝ մշակումը և վերամշակումը, պետք է իրականացվի համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ մակաբացման ապարները բացակայում են և ընդերքօգտագործմանը թափոնների օբյեկտ չի նախատեսվում: Հետախուզահորերի անցման ժամանակ կառաջանա լեռնային զանգված, ինչը փաստագրումից, նմուշարկումից ու դաշտային պայմաններում դրանց ծավալալիքային զանգվածի ու փխրեցման գործակցի որոշումից հետո, անմիջապես հետ են լցվելու փորվածքներ:

Հետախուզահորերի անցման ժամանակ հանված ԱԿԽ-ի 288մ³ զանգվածը կկուտակվի հորերի անմիջական հարևանությամբ /մինչև 1.0 մ հեռավորության վրա/ և քանի որ հորերի խորությունը փոքր է, աշխատանքները կարճաժամկետ, նախատեսվում է անմիջապես հետ լցնել փորվածքներ:

Այդ ապարներն իներտ են, ոչ վտանգավոր և չեն ենթարկվում էական ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական վերափոխումների, հետևաբար շրջակա միջավայրի վրա և մարդու առողջության վրա բացասական ազդեցություն չեն ունենա: Այսպիսով հետախուզահորերի անցման ժամանակ թափոններ չեն առաջանա:

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Արմավիրի մարզի Արտամետի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում ծրագրավորվող երկրաբանահետախուզական աշխատանքները կարճատև են և փոքրածավալ: Աշխատանքների իրականացման ժամանակ շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարել մոտակա սպասարկման կետերում կամ կայաններում, ինչը կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով:

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր՝ կնքելով դբահանության նպատակով համապատասխան ծառայությունների հետ պայմանագիր և կատարել համապատասխան վճարումներ:

- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում:

- Արտանետվող վնասակար նյութերի քանակը նվազեցնելու նպատակով սարքավորումների վրա արտանետվող նյութերի չեզոքացուցիչների՝ կատալիտիկ ֆիլտրերի տեղադրում:

- Փոշենստեցման նպատակով ջրցանի իրականացում՝ տեղամասին մոտեցնող ճանապարհի երկայնքով և հետախուզահորերի անցման տարածքներում: Փոշեզոյացումը նվազեցնելու/կրճատելու համար անհրաժեշտ ջուրը վերցնել Արտամետ բնակավայրի ոռոգման ցանցից՝ պայմանագրային հիմունքներով, կամ գնել ջրամատակարար կազմակերպությունից:

- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, կամ կենսաբանական մաքրման կայանում, որոնց մաքրումը կամ դատարկումը իրականացնել հատուկ ծառայության ուժերով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- Խախտված տարածքների վերականգնում, ինչի նպատակով հետախուզահորերի անցման տարածքներում հողի վերին շերտը հանել, կուտակել անմիջապես փորվածքի հարևանությամբ, հետախուզական աշխատանքների ավարտից հետո օգտագործելով ռեկուլտիվացիոն աշխատանքներում: Ռեկուլտիվացված տարածքներում իրականացնել նաև տարածքին բնորոշ խոտային բուսականության սերմերի ցանք /կենսաբանական վերականգնում/:

Միջոցառումները և ծախսերը ներկայացված են ՇՄԱԳ-ի համապատասխան բաժնում:

- Բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներին համապատասխան: Երևական տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով՝

- 1) առանձնացնում են օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

- 2) ժամանակավորապես սահմանափակում են առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը:

- Երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ կենդանիների և թռչունների բների հայտնաբերման նպատակով դրանց տեղափոխում աշխատանքների տարածքից դուրս՝ անվտանգ վայրում:

- Շրջանի կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցման նպատակով սարքավորումները աշխատանքները բացառապես սարքին վիճակում՝ ապահովելով նորմատիվ փաստաթղթերով սահմանված աղմուկի նվազագույն մակարդակը:

- Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ:

- Անվտանգության նկատառումներից ելնելով աշխատանքների իրականացման տարածքների մեկուսացում/ցանկապատում: Անվտանգության ապահովման նպատակով մուտքային ճանապարհների մոտ՝ հետախուզահորերի հարևանությամբ տեղադրել զգուշացնող ցուցանակներ:

- Ճանապարհներից դուրս տեխնիկայի տեղաշարժի բացառում:

- Պատահական գտածոների ընթացակարգի իրականացում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Աղյուսակ 13.

Գործողությունը	Հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բնական բաղադրիչի վրա	Չեզոքացման միջոցառումը	Արժեքը
1	2	3	4
Հետախուզական փորվածքների, հետախուզահորերի տրանսպորտի տեղաշարժ	Փոշու և ծխազագերի արտանետումներ, մթնոլորտային օդի որակի փոփոխություն	Ջրցան	
		- Տեխնիկական միջոցների ապահովում՝ արտանետվող նյութերի չեզոքացուցիչներով՝ կատալիտիկ ֆիլտրեր	Ընկերության մեքենաները կահավորված են համապատասխան սարքերով, լրացուցիչ ծախս չի նախատեսվում
		Հետախուզահորերի անցման ժամանակ ջրցանի իրականացում ջրցան մեքենայով՝ փոշու առաջացումը կանխելու նպատակով	Ծախսերը իրականացնում է հորատող մասնագիտացված կազմակերպությունը, «ՄԱՆ ՎԱԼԼԻ» ՍՊ ընկերությունը ծախսեր չի իրականացնելու
		Մթնոլորտային օդի որակի պարբերական մոնիթորինգ	Տարեկան 150.0հազ.դրամ
	Հողերի խախտում հետախուզահորերի սահմաններում	Խախտված տարածքների վերականգնում	152840 ՀՀդրամ
		Խախտված տարածքների վերականգնում: Ռեկուլտիվացիոն աշխատանքների 2 (լեռնատեխնիկական և կենսաբանական) փուլերով	152840 ՀՀդրամ
	Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով	Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում	«ՄԱՆ ՎԱԼԼԻ» ՍՊ ընկերությունը ծախսեր չի իրականացնելու
1	2	3	4
Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ	Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով	Հողերի աղտոտվածության պարբերական մոնիթորինգ	Տարեկան 50.0հազ.դրամ
		Տրանսպորտի տեղաշարժ բացառապես	Ծախսեր չի պահանջում

		գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհներով	
	Բուսածածկի խախտում հետախուզափորերի սահմաններում	Խախտված տարածքների վերականգնում: Ռեկուլտիվացիոն աշխատանքների 2 (լեռնատեխնիկական և կենսաբանական) փուլերով	Փոխհատուցվում է ռեկուլտիվացիոն ծախսերով
		Կենսաբազմազանության մշտադիտարկում, տարեկան մեկ անգամ պարբերականությամբ	Տարեկան 200.0 հազ. դրամ
		ՀՀ կառավարության 2014թ. Հունիսի 31-ի N781-Ն որոշման պահանջների ապահովում	Ընկերության ընթացիկ ծախսերով
	Կենդանիների վրա հնարավոր ազդեցություն՝ լանդշաֆտի խախտման և առաջացող աղմուկի հետևանքով	Խախտված տարածքների վերականգնում: Ռեկուլտիվացիոն աշխատանքների 2 (լեռնատեխնիկական և կենսաբանական) փուլերով	Փոխհատուցվում է ռեկուլտիվացիոն ծախսերով
Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ			
		Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում ՇՄԱԳ-ի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ	Ծախսեր չի պահանջում
	Ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա	Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում, աշխատանքների ժամանակավոր դադարեցում, պետական կառավարման մարմինների իրազեկում, հետագա աշխատանքների համաձայնեցում լիազոր մարմինների հետ	Ծախսեր չի պահանջում
	Ընդերքօգտագործման թափոնների գոյացում	Փուշտա շերտի առաջացումների օգտագործում ռեկուլտիվացիայի	Փոխհատուցվում է ռեկուլտիվացիոն ծախսերով

		լեռնատեխնիկական փուլի ժամանակ	
--	--	-------------------------------	--

* նույն գումարն է, որը վճարվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան

1	2	3	4
Անձնակազմի կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում	Տեղամասի տարածքի աղտոտում կենցաղային թափոններով	Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր	Տարեկան 50.0հազ.դրամ
	Տեղամասի տարածքի հնարավոր աղտոտում կենցաղային արտահոսքերով	Հորատիպ անջրաթափանց զուգարան շինարարություն կամ կենսաբանական մաքրման կայանի կիրառում	Կատարվելու է նախքան հետախուզական աշխատանքների մեկնարկը, Ընկերության ընթացիկ ծախսերով
		Հորատիպ զուգարանի դատարկում հատուկ ծառայության ուժերով	Տարեկան 80.0հազ.դրամ

9.ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար՝ շարժական կապի միջոցների առկայությունն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ, առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Տեղամասում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում: Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N 24-Ն հրամանի՝ տեղամասի տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 400սմ/վրկ² կամ 0.4g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

2) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

3) Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ):

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են արտադրական հրապարակում տեղադրված վազոն-տնակում:

Տեղամասի տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

10.ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Արմավիրի մարզի Արտամետի ավագակոպճային խառնուրդի երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «ՄԱՆ ՎԱԼԼԻ» ՄՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացման ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- աշխատանքների ընթացքում երևակման տարածքում և ճանապարհի հարակից տարածքում մթնոլորտային օդում փոշու և ծխագազերի մոնիթորինգ, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ,
- երևակման տարածքում հողերի աղտոտվածության մշտադիտարկում,
- տարածքին բնորոշ վայրի բնության տեսակների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (դիտարկումը կատարվելու է երևակման և հարակից տարածքներում),
- հարակից տարածքում գտնվող արհեստական ջրային մարմնի /բետոնյա առու/ մշտադիտարկում,
- աղմուկի մակարդակի չափում Արտամետ և Արևադաշտ բնակավայրերի ուղղությամբ:

Մշտադիտարկման տեսակների և պարբերականության վերաբերյալ տվյալները ներկայացված են նաև աղյուսակում, իսկ տեղադիրքերը ներկայացված են սխեմատիկ քարտեզում:

Մշտադիտարկումների օբյեկտը և վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկման տեսակը	Նվազ. հաճախական.
1	2	3	4


Մթնոլորտային օդ (տեղամասի սահմաններում, աշխատանքների իկարանացման վայր)	Հանքափոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ (տեղամասի սահմաններում, աշխատանքների իրականացման վայր)	Նավթամթերքների մնացորդներ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	ամսեկան մեկ անգամ

1	2	3	4
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ (տեղամաս և հարակից շրջան)	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տարեկան մեկ անգամ
Աղմուկի մակարդակ (տեղամասի սահմաններում, աշխատանքների իրականացման վայր)	Ձայնային բնութագիր	Չափում ավտոմատ սարքերով	Տարեկան մեկ անգամ
Մակերևութային ջրեր /ճանապարհի հարակից տարածքում առկա բետոնյա առու/	շահագործական փորվածքների արտահոսքեր, ջրերի հեռացման համակարգեր, կենացաղային արտահոսքեր	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, հոսքի ուսումնասիրություն	շաբաթական մեկ անգամ

Երևական տարածքում կատարվելիք շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման համար նախատեսված գումարները գնահատվել են տարեկան 450.0 հազ. ՀՀ դրամ, ինչը ներառված է ընկերության շահագործական ծախսերի կազմում:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների վերահսկման և մշտադիտարկումների կետերի տեղաբաշխման սխեմատիկ քարտեզ

Նկար 11



11. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տեղեկատվական տվյալներ
2. 2.Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2008,
4. Հայաստանի բնաշխարհ, 2006
5. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրաման
6. 2. Շինարարական կլիմայաբանություն, ՀՀՇՆ II-7.01-2011
7. 3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն:
8. Հայաստանի կենսաբազմազանության առաջին ազգային զեկույց, 1999
9. ՀՀ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> օրենք
10. лора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
11. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
12. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ
13. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
14. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
15. ՀՀ Լոռու մարզպետարանի պաշտոնական կայք
16. . ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք
17. 10. «Заповедники СССР. Заповедники на Кавказе». Издательство "Мысль" 1990
18. Թամանյան Կ., Գաբրիելյան Է., Ֆայվուշ Գ., Հովհաննիսյան Մ., Ներսեսյան Ս., Արևշատյան Ա., Խանջյան Ն., Վարդանյան Ժ., “Հայաստանի էնդեմիկ բույսերի կարմիր ցուցակ”

ՀԱՍՏԱՏՈՒԾՄԵՍ
 «ՍԱՆ ՎԱԼԼԻ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
 _____ Դավիթ Թովմասյան
 « » _____ 2025թ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Արմավիրի մարզի Արտամետի ավագակոպճային խառնուրդի հանքերնական
 2024-2026թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման

Հ/Հ	Աշխատանքների տեսակները	Չափման միավորը	Միավորի արժեքը	Քանակը	Գումարը, դրամ
1	2	3	4	5	6
	ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1	Երկրաբանական և տոպոգրաֆիական հանույթ 1:1000 մասշտաբի	հա	5000	37.8	189000
2	Հետախուզահորերի անցում	զծ. մ	128	10000	1280000
	ԸՆԴԱՄԵՆԸ				1469000
3	Հետախուզահորերի փաստագրում	զծ. մ	1000	128	128000
4	Հետախուզահորերի նմուշարկում	նմուշ	1500	16	24000
5	Պետրոգրաֆիական ուսումնասիրություն	նմուշ	15000	3	45000
6	Երկրաբանական հանույթային աշխատանքային աշխատանքներ	հա	10000	37.8	378000
7	Հիդրոերկրաբանական ինժեներաերկրաբանական				120000

	ուսումնասիրություններ				
8	Հողերի վերականգնում				90720
Ընդամենը դաշտային աշխատանքներ		դրամ			2254720
10	Տրանսպորտային ծախսեր 10%	դրամ			225472
11	Աշխատանքների կազմակերպում 1%	դրամ			22547
12	Աշխատանքների լուծարում 1%				22547
13	Հաշվետվության կազմում	դրամ			350000
14	ՏՏՀ-ի կազմում	դրամ			300000
15	Լաբորատոր ուսումնասիրություններ	դրամ			360000
16	Ռեկուլտիվացիա	դրամ			152840
ԸՆԴԱՄԵՆԸ		դրամ			3688126

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՄԵՏԻ ԱՎԱԶԱԿՈՂՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԵՐԵՎԱԿՄԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 2024-2026 թ.թ. ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/հ	Աշխատանքների տեսակները	Չափման միավորը	Ծավալը	2024	2025					2026			
				IV	I	II	III	IV	I	II	III	IV	
1	2	3	4	6	7	8	9	10	11	12	13	14	
1	Ֆոնդային նյութերի հավաքում, ծրագրի և նախահաշվի կազմում												
2	Դաշտային աշխատանքների կատարում												
3	Երկրաբանական և տոպոգրաֆիական հանույթ	հա	37.8		17.8	20.0							
4	Հետախուզահորերի անցում և փաստագրում	գծ.մ	128		64	64							
5	Հետախուզահորերի նմուշարկում	նմ	16		8	8							
6	Ավազակոպճային խառնուրդի ծավալային զանգվածի որոշումը դաշտային պայմաններում	մ³	60		30	30							
7	Ռադիոմետրիական դիտարկումներ	հա	37.8										
8	Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական դիտարկումներ	հա	37.8										
9	Լաբորատոր հետազոտություններ, այդ թվում՝	նմուշ	22										
10	• Ֆիզիկամեխանիկական փորձարկումներ	նմուշ	16		8	8							

1	2	3	4	6	7	8	9	10	11	12	13	14
11	• Միներալոպետրոգրաֆիական հետազոտություններ	շլիֆ	3		3							
12	• Քիմիական ուսումնասիրություններ	նմուշ	3		3							
13	Աշխատանքների լուծարում											
14	Աշխատանոցային աշխատանքներ											
15	Հաշվետվության և ՏՏՀ-ի կազմում ու ձևավորում											
16	Հաշվետվության ներկայացում ՀՀ ՏԿԵ նախարարություն											

“Հ Ա Ս Տ Ա Տ ՈՒ Մ ԵՄ”

Տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարար

Դավիթ Խուդաթյան

“ՍԱՆ ՎԱԼԼԻ” ՍՊԸ –ի տնօրեն

Դավիթ Թովմասյան

« 2025թ.